



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՆՓՆՈՒ ՀԱՅՐԸՊԵՏԻ ԵՌԱՄՅԱԿՈՒՆԵՆԻԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

(ԿԱՐԴԱՅՎԱԾ 1958 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ, ՀԻՆԳՇԱՐԹԻ)

Գերաշնորհ սրբազան հայրեր, հոգեշնորհ վարդապետներ, հարգելի՛ պատգամավորներ և հյուրեր.

Տիրոջ ողորմությամբ, Ազգային-եկեղեցական ժողովի ընտրությամբ և Մայր Տաճարիս մեջ օծման սրբազան արարողությամբ, 1955 թվականի հոկտեմբերին կոչվեցանք կրելու ծանր բայց փառք լուծը Ամենայն Հայոց Հայրապետության:

Ձեզմե շատեր կհիշեն անշուշտ այն ջերմ ու խանդավառ մրնոլորտը, որ ստեղծված էր այստեղ այդ օրերուն, երբ տեղի կունենար ընտրությունը և օծումը հոր Կաթողիկոսին, օրհնությունը Սրբալույս Մեռնի և եպիսկոպոսական շնորհաբաշխություններ:

Այդ օրերը սակայն արագ անցան, պատգամավորները մեկնեցան և Մենք մնացինք այստեղ, դեմ հանդիման աշխատանքի մը, որ վեր էր Մեր ուժերեն, դեմ հանդիման կացությանց, որոնք մեծ մասամբ անծանոթ էին Մեզ՝ իբրև արտասահմանե եկած հոգևորականի, և վերապես դեմ հանդիման բազում հարցերու, այլազան խնդիրներու, որոնք Մեր առաջ կդրվեին՝ հոգևոր, կրթական, վարչական, կազմակերպական և տնտեսական, ինչպես նաև արտասահմանի մեր հոգևոր կեդրոններու հետ փոխհարաբերությանց տեսակետներ:

Միայն Աստված գիտե, թե ինչքան ծանր ճնշեցին Մեր գիտակցության վրա այդ բոլորը, և ինչքան տկար զգացինք Մենք զՄեզ Մեր գործունեության առաջին ամիսներուն:

Մայր Աթոռն ենք և Մայր Աթոռի շուրջ, և ներքին քննարկ մեջ, ամեն ինչ պետք էր վերակազմակերպել և վերակառուցել թե՛ հոգևոր, թե՛ վարչական, թե՛ տնտեսական իմաստով:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հոր ժամանակաշրջան մը սկսավ ապրիլ, ներքին և արտաքին հոր պայմաններու և հոր իրադրության ներքին: Այս հոր շրջանը կպահանջեր ղեկավարման հոր ոգի, գործելու հոր եղանակ և մանավանդ հոր մարդիկ:

Հեռու Մեզմե այն մտածումը, թե Մեր առջև դրված բոլոր հարցերը կարողացանք լուծել և հասնիլ այսօրվան Ձեզ բոլորիդ հայտնի արդյունքներուն, Մեր անձնական կարողություններուն շնորհիվ:

Մենք իրապես կհավատանք, և երբեմն կարծեք նույնիսկ ֆիզիկապես կզգանք, որ Մեր սիրտն ու միտքը և Մեր աշխատանքը ղեկավարողը Մեր անձնն դուրս և վեր գտնվող աներևույթ գործություն մըն է, որ կներշնչե Մեզ և բոլոր անոնք, որոնք այստեղ Մեր շուրջը կգործեն:

Մենք հստակ կերպով կզգանք, թե այդ գործությունը մեկ մասնիկն է այն ոգեղեն իմանալի փառաց յուշին, որ այստեղ շողաց Միածնի էջֆով:

Մեր գործության երկրորդ աղբյուրը, նույնքան կենսաբար, մեր հայրենի ժողովուրդի հոգվույն մեջ միշտ կենդանի հավատքի սուրբ ավազանն է, որուն անհասանելի և անհիմանալի ակունքներեն, մեր օրերուն, ա-

վելի և ավելի չինջ ու վնիւ, առատ ջուրեր արհիւ-արհիւ կբարձրանան ու կհորդին, կտա-
րածվին մեր ջուրը, կհոսին մեր սրտերեն
ներս, արգասավորելով հոգիները մեր բա-
լորին, հոգիները մեր ժողովուրդին բալոր
զավակներուն, մինչև հեռավոր ամիսները աշ-
խարհի:

Մայր Աթոռի վերակենդանությունը և վե-
րաշինությունը պայմանավորող մեկ ուրիշ
կարևոր ազդակ կհանդիսանա կրոնական
կյանքի նկատմամբ մեր Հայրենի Պետու-
թյան լայնախոն և բարյացակամ վերաբեր-
մունքը, որ կարտահայտվի իրավական և
գործնական ձևերով, որով մեր եկեղեցա-
կան եյանքը, հատկապես Մայր Աթոռը,
հետզհետե, ֆայլ առ ֆայլ կվերաշինվի,
կկազմակերպվի ու կծաղկի:

Սրտի մեծ գոհունակությամբ պետք է ան-
կեղծորեն հայտարարենք, թե Պետական Իշ-
խանությանց և Մայր Աթոռի փոխհարաբե-
րությունները շատ ավելի բնականոն կեր-

պով ընթացան և շատ ավելի արդյունավետ
եղան հոգուտ եկեղեցվո, քան Մենք կակրե-
կայեինք Մեր բնութային առաջին օրերուն:
Մեր Հայրենի Կառավարությունը եղավ և է
նշմարիտ բարեխնամ կառավարություն մը,
միշտ ուշադիր, միշտ հարգալից և բարյա-
ցակամ Մեր անձին և Մեր եկեղեցաշեն
գործին նկատմամբ:

Մեր բոլոր ձեռնարկներուն և իղձերուն
իրականացման ճանապարհին, զգացիմք և
հաստատեցինք Սովետական Միության
Կառավարության և Սովետական Հայաս-
տանի Պետական Իշխանության արդարա-
դատ ոգին և իմաստուն փառափառու-
թյունը եկեղեցական գործերու վերաբերյալ:

Կյանքիմք, թե այս սրբազում ժողովրդ,
երախտագիտության զգացումով, իր աղոթքն
ու սրտագին բարեմաղթությունները պի-
տի միացնեն Մեր մաղթանքներուն՝ վասն
բարօրության և վասն խաղաղության մեր
Հայրենի երկրին:

Ա) ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեր գործունեության առաջին իսկ օրե-
րուն, Մեր հայացքը ուղղեցիմք նախ դեպի
Մայր Աթոռիս միաբանությունը: Մեր ջուր-
ը տեսանք հին սերունդի փոքրաբիվ, ծե-
րունազարդ հոգևորականներ, որոնց առա-
ջացած տարիքի թույլ չէր տար Մեզ ծան-
րաբեռնել զանոնք նոր աշխատանքներով:

Մեր ջուրը կային նաև երիտասարդ միա-
բաններ՝ 7 արեղաներ Հոգևոր Ճեմարանեն
շրջանավարտ, որոնք հավատարիմ իրենց
ոլիսին, մնացել էին Ս. Աթոռին մեջ, սպա-
սելով այն օրվան, երբ իրենց ևս պիտի
վստահվեին պատասխանատու պաշտոններ:

Երիտասարդ միաբանները Մեզ մոտեցան
երկշտությամբ և նոր հույսերով ոգեշրնչ-
ված:

Անոնց հոգիներեն ներս Մենք տեսանք
կայծերը սուրբ իղձերու, և կոյումի մը գի-
տակցությունը: Զգուշությամբ և սիրով սկը-
սանք աշխատանքը՝ անեցնելու համար
լույսը իրենց մաքիմ, ջերմությունը իրենց
սրտին և սրբության զգացումը իրենց կամ-
քին, այն վստահությամբ, թե իրենց հոգի-
ներու կայծերը շուտով պիտի վերածվին

հուրի, զիրենք մղելով դեպի եկեղեցաշեն
աշխատանք:

Կազմեցինք Ս. Էջմիածնի միաբանության
առժամյա կանոնադրություն մը, հիմնված
վանական կյանքի կանոններու վրա, պատ-
շանեցված մեր տեղական պայմաններուն,
ու վերակազմակերպեցինք ներքին կյանքը՝
հաստատելով միաբանական կյանք, սեղա-
նատուն, և ամեն մեկի համար պարտադիր
աշխատանքի դրություն, պատասխանա-
տրվության զգացումի, կարգապահության և
անպայմանավոր հնազանդության պայման-
ներու ներքին:

Երեք տարվան գործունեությունեն վերջ,
Մենք ուրախությամբ կրնանք Ձեզ հայտնել,
թե այս աշխատանքը իր արդյունքներով
Մեզ կրավարարե, և վստահ ենք, թե մեր
երիտասարդ միաբանները, հետզհետե ա-
ռավել նվիրումով ու եռանդով պիտի շարու-
նակեն իրենց վստահված գործը և լրիվ
կերպով պիտի արդարացնեն մեր բոլոր
հույսերը:

Այսօր Մայր Աթոռի միաբաններու ընդ-
հանուր թիվն է 29:

Բ) ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Վերջին Ազգային-եկեղեցական ժողովը,
իր Դ նիստին մեջ, ընտրեց Մայր Աթոռ Ս.
Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը
հետևյալ կազմով.

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐ

- 1) Ս. Սիմոն արքեպիսկոպոս Մանուկյան.
- 2) Ս. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հով-
հաննիսյան.

3) Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյան.

4) Տ. Եղեիկ եպիսկոպոս Ազնավուրյան:

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՆԵՐ

1) Պրոֆ.-դոկտ. Արարատ Ղարիբյան.

2) Պրոֆ. Առաֆել Առաֆելյան.

3) Դոցենտ Արտաշես Տիրացյան.

4) Ուսուցիչ Արամ Աղաջանյան:

Գերագույն Հոգևոր Խորհուրդի աշխարհական անդամներին վերջին երեքը նախկին Գևորգյան ճեմարանի աշակերտներն են:

Գերագույն Հոգևոր Խորհուրդի որպես պատվո անդամներ ընտրված էին նաև մեծատաղանդ բանաստեղծ, անմոռանալի վարպետը՝ Ավետիք Իսահակյան և ծանոթ երկրաբան և ազգային գործիչ Ստեփան Կամսարականը: Վերջինը դժբախտաբար Մեր ընտրություններն ֆանի մը օր հետո իր հոգին կալանդեց երկար հիվանդություններ մը

վերջ, իսկ վարպետը երկու տարիներ շարունակ կանոնավոր կերպով մասնակցել է հետո Գերագույն Հոգևոր Խորհուրդի նիստերուն, իր աշխարհակալ տեսակետով 1957 թվականի հոկտեմբեր 17-ին:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը այս երեք տարիներու ընթացքին գումարած է 78 նիստեր, Կաթողիկոսի նախագահության տակ, լուծելով հերթական կերպով իր առաջ դրված բոլոր հարցերը, բլլա Մայր Աթոռի գործերու, բլլա արտասահմանի թեմերու վերաբերյալ:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը երեք տարիներու ժամանակաշրջանին, իր աշխատանքներով մեծապես օգտակար եղած է Մեզ՝ իրեն խորհրդատու և գործակից մարմին:

Այս հանդիսավոր առիթով, Մենք պարտվող կզգամք Մեր շնորհակալության արտազին խոսքը ուղղելու Գերագույն Հոգևոր Խորհուրդի Մեզ սիրելի բոլոր անդամներուն:

Գ) ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ

Հոգևոր ճեմարանը Մեր արտին ամենամոտ և հայրապետական գուրգուրանքին առարկա հաստատությունն է:

Մենք Մեր գանակալության առաջին իսկ օրեն վառ հույսեր կապեցինք մեր Հոգևոր ճեմարանին, և մեծ ակնկալություններ ունեինք անկե, այսօր մանավանդ, երբ մեր Եկեղեցին կանգնե իր վերագործների շրջաններեն մեկը:

Մեր հայրապետական անդամների կողմից մեզ ճեմարանի մասին գրած էինք, որ «Հայրական հոգածությամբ պիտի նվիրվինք Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի մակարդակի բարձրացման, որպեսզի ան առավելագույն չափով արդարացնե իր գոյությունը, և այսօրվան մեր համեստ և երկոտ պատանիները, տարիներ հետո՝ մարմնով անած ու հոգիով սնած, հավատով և շնորհներով լի, նվիրյալ մշակներ դառնան Տիրոջ այգիին մեջ»:

Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանը իր ետին ունի դարերու պատմություն մը: Ս. Էջմիածնի կամարներուն տակ ի վաղուց անտի գոյություն ունեցած է «աղբիւր գիտություն և ստուծոյ», որ կհագեցներ ծառամը Ավետարանի գիտության կարոտ հոգիներու:

Դարերու ընդմեջեն եկող այս հոգևոր դպրանոցը, ԺԹ դարու 70-ական թվականներուն, կոչվեցավ Գևորգյան ճեմարան: Անկիկա ամենափայլուն կրթարանը հանդիսացավ ամբողջ Հայաստան աշխարհին մեջ, և բազմակողմանիորեն պատրաստված սերունդներ տվավ Եկեղեցիին, հայ գրականության, գիտության ու արվեստներուն:

Առաջին համաշխարհային պատերազմին և անոր հաջորդող տարիներուն ստեղծված պայմաններու պատճառով, Գևորգյան ճեմարանը իր դռները փակեց և 28 տարիներ հետո, 1945 թվականին, երջանկանիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի ջանքերով և Հայրենի կառավարության բարեհաճ քույրությունամբ, նորեն բացվեցավ ան՝ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան անվան տակ:

Հոգևոր ճեմարանի ուսանողներուն քիվը այս երեք տարիներու ընթացքին 45—55-ի միջև տարուներվեցավ:

Հոգևոր ճեմարանը իր ուսումնական ծագողով գիշերօթիկ բարձրագույն ընծայարան մըն է, ուր ուսանողները կստանան ձրի կրթություն, սնունդ և հանդերձանք: Առաջին տարիներուն ունեինք միայն դասարանական 3 և լսարանական 1 բաժին: Այժմ լսարանական բաժինը ևս 3 դասարաններ ունի, արդարացնելով Հոգևոր ճեմարանի թե՛ կոչումը և թե՛ անունը:

Մեր ճեմարանի ծրագրին համաձայն աշակերտներ կընդունվին թե՛ մեր Հայրենիքեն և թե՛ արտասահմանեն: Ճեմարանի լրիվ դասընթացը 6-ամյա է, գոր հաջող կերպով ավարտողը, երբ իր վարձով ու բարձր օրինակելի նկատվի, կրնա ձեռնադրվի կուսակցուն կամ ամուսնացյալ ֆահանա, Մեր հարմար նկատած ժամանակին:

Ստորև կներկայացնենք 1958—1959 դրացական տարվան ուսուցչական կազմը՝ իրենց դասավանդած նյութերով միասին:

- 1) Կաթողիկոսը կդասավանդե հոգեբանություն, տրամաբանություն, փիլիսոփայություն և ֆարզախոսություն:
- 2) Գերաշնորհ Ս. Սահակ արքեպիսկոպոս Ս. Հովհաննիսյան՝ եկեղեցական տոմարագիտություն:
- 3) Գերաշնորհ Ս. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյան (վերատեսուչ)՝ Ս. Գիրք, գրաբար և ծիսագիտություն:
- 4) Հոգեշնորհ Ս. Մեսրոպ վարդապետ Անրաբյան (փոխ-տեսուչ)՝ Հայ եկեղեցի պատմություն և գրականության պատմություն:
- 5) Արժանապատիվ Ս. Կոմիտաս ֆանանա Շիրինյան՝ եկեղեցական երաժշտություն:
- 6) Արժանապատիվ Ս. Հովհաննես ֆանանա Մարության՝ հայոց լեզու և կրթագիտություն:
- 7) Պր. Համո Հարությունյան՝ հայ ժողովրդի պատմություն:
- 8) Պր. Վարագ Առաքելյան՝ հայերեն գրաբար:
- 9) Պր. Արթուր Հատիսյան՝ աստվածաբանություն, հայ եկեղեցական մատենագրություն և մեկնություն Գործք Առաքելոցի:
- 10) Պր. Սարգիս Կոնստանյան՝ Ս. Գրոց երաժշտություն և մեկնություն:
- 11) Պր. Պարգև Շահբազյան՝ Հայոց լեզու և գրականություն:
- 12) Տիկ. Մարիա Գրիսուկայա՝ ռուսաց լեզու:
- 13) Պր. Գեղամ Շահինյան՝ ֆրանսերեն և անգլիերեն:
- 14) Պր. Նդիշե Վարդերեսյան՝ պատմություն Հնդկանուր եկեղեցվո, ֆրանսերեն և ֆրիստոնեսական վարդապետություն:
- 15) Պր. Գրիգոր Գյուլյան՝ հայոց լեզու և հայոց պատմություն (ավանդական):
- 16) Պր. Մովսես Շարաբյան՝ երաժշտություն (սովետ):
- 17) Պր. Գառնիկ Քենյայան՝ տոմարակալություն (հաշիվ):
- 18) Պր. Հարություն Սիմոնյան՝ մարմնակրթական:

Ինչպես գիտեք, մեկ տարի է արդեն Մեր հրավերով Մայր Աթոռ ժամանեց Նուսահեմի ժառանգավորաց վարժարանի նախկին տեսուչ՝ գերաշնորհ Ս. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյան և ի մեծ գոհունակություն Մեզ՝ ստանձնեց Հոգևոր ձեմարանի վերատեսչությունը, իրեն օգնական ունենալով Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Ս. Մեսրոպ վարդապետ Անրաբյանը՝ որպես փոխ-տեսուչ:

Մեր ուսանողներու օրը կսկսի ժամը 6.30-ին: Ժամը 7—7.20 մարմնամարզով զբաղելի վերջ, ժամը 7.30-ին բոլորը կմասնակցին առաջնության ժամերգության, գործունե կերպով: Ժամը 8.30-ին կնախանաչեն, իսկ ժամը 9-ին կհենչե դասի զանգակը: Օրական ունին 6 ժամ դաս: Դասերը կավարտին ժամը 2.30-ին: Ճաշեն հետո ժամը 3—5 ուսանողներու հանգստյան ժամն է: Ժամը 5-ին նեմարանցիները կմասնակցին երեկոյան ժամերգության: Ժամը 5.45—7.30 տեղի կունենա սերտողություն, ապա ընթրի՝ ժամը 7.30-ին: Իսկ ժամը 8.10-ին կշարունակվի սերտողությունը:

Հոգևոր ձեմարանի վերատեսչության կարկադրությամբ ամեն հինգշաբթի կեսօրե վերջ ժամը 4—5 տեղի կունենա դասախոսական հավաքույթ, որ բանախոսության կհրավիրվին մասնագետ դասախոսներ Նրեանեն, գիտական և գրական նյութերու շուրջ: Իսկ շաբաթ երեկոները տղաք իրենց ուժերով կկազմակերպեն գրական-գեղարվեստական հավաքույթներ: Հանախ տեղի կունենան նաև կինոնկարներու դիտումներ ձեմարանի սեփական մեքենայով: Մեր ուսանողությունը երբեմն կկատարե զբոսապտույտներ դեպի պատմական և հնագիտական արժեքներ կայացնող քանդաքաններ և հուշարձաններ: Տարին ֆանի մը անգամ նեմարանցիները խմբով կտարվին Նրեան կամ Էջմիածին՝ ներկա ըլլալու քառերական ներկայացումներու, համերգներու կամ օպերա:

Հոգևոր ձեմարանը ունի նաև իր գրադարան-ընթերցարանը 12 000 գրքերով, որ բաց է ուսանողներուն առջև իր որոշ ժամերուն: Ուսանողները իրենց ազատ ժամերուն կգրադին նաև մարզական խաղերով՝ վոլեյբոլ և պինգպոնգ:

Դ) «ԷԶՄԻԱՄԻՆ» ԱՄՍԱԳԻՐ

Մեր մտածումը եղած է և է Հայ եկեղեցվո վերականգնման և զորացման աշխատանքներուն մեջ կարևոր և պատասխանատու դեր մը հատկացնել ընդհանրապես հայ կրոնական մամուլին և ի մասնավորի Մայր Աթոռի պաշտոնաթերթին:

Ամսագրի խմբագրության առաջ Մենք խնդիր դրած ենք՝ հոգևոր սնունդ տալ հայ ժողովուրդին, պատկերել Մայր Աթոռի կյանքը իր բոլոր երեսներով, լայն կերպով արձագանքել Սփյուտի և ներքին թեմերու մեր ազգային-եկեղեցական կյանքին և հատուկ

տեղ տալ նաև պատմա-բանասիրական ուսումնասիրությանը, որոնք որոշ աղերս ունին մեր Ս. Նկեղեցվո առջև և ներկա կյանքին հետ:

Մայր Աթոռի պաշտոնաթերթը, պր. Արքուն Հատիտյանի խմբագրությամբ, աշխատած է ընթանալ Մեր գծած նախապահով, և կյանքին, բե աղյուսները ավելի քան զոհաբերել են: Մեր ամսագրի հիմնական բերությունը, որ բերությունն է նաև մեր ամբողջ կրոնական մամուլին, աստվածաբանական, կանոնագիտական, եկեղեցական պատմության, եկեղեցական մատենագրության ու արվեստներում նվիրված լուրջ հոգվածներն ու ուսումնասիրություններն ունենալով մեզ: Մեր իդն է, որ Մայր Աթոռի պաշտոնաթերթը հետզհետե դառնա նաև հայ աստվածա-

բանական մտքի զարգացման հանդես մը: Այս հարցը Մենք ամենայն կարևորությամբ կհանձնենք սրբագումար ժողովի ուշադրության:

Գոհունակությամբ այստեղ կարող ենք հայտարարել, թե Մեր զանալայության վերջին երկու տարիներու ընթացքին ավելցավ ամսագրի տպաքանակը:

Եթե 1955 թվականին ամսագրի տպաքանակը եղած էր 2000 օրինակ, 1958 թվականին այն բարձրացավ 3500-ի:

Մենք պիտի փափագենք ժողովի ուշադրությունը հրավիրել Սփյուռքի մեջ ամսագրի բաժանորդագրության հարցի վրա, զայն ալ ավելի կանոնավոր և արդյունավետ դարձնելու համար:

Ե) ՏՆՏԵՍԱԿԱՆ

Ուրախությամբ պետք է հաստատենք, թե վերջին երեք տարիներուն ընթացքին Մայր Աթոռի և ներքին քեմերու տնտեսական կյանքի պատկերը ավելի քան հուսադրիչ է, և գերազանցված են Մեր նախատեսությունները՝ նորանոր հեռանկարներ բանալով մեր առաջ:

Թույլ տվեք Ձեզ ներկայացնել Մայր Աթոռի տնտեսական կյանքի պատկերը ճշգրիտ թիվերով:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՆՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐՆՆ, ըստ տարիներու, եղած են այսպես.

1955 թվականին՝	1 314 400	նուրի.
1956 »	1 772 000	»
1957 »	2 228 000	»
1958 »	2 540 000	»

Գոհունակությամբ կհայտնենք Ձեզ, որ սույն տարվան նախատեսությունները պիտի գերազանցվին 20—25 տոկոսով: Այսինքն այս տարվան մեր ներքին եկամուտները պիտի բարձրանան մոտավորապես 3 000 000 նուրի:

Խնդրենք, թե այս թվերը ինքնին կխոսին հստակ կերպով Մայր Աթոռի և ներքին քեմերու ֆինանսական գործունեության միաբարակ վիճակի մասին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1958 թվականի եկամուտներու և ծախսերու նախաճաշիվը

Զ) ՎԵՐՍՏՈՒԳԻԶ ԶԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1958 թվականին Ազգային-եկեղեցական ժողովը, Գերագույն Հոգևոր Խորհուրդի կողմից, ընտրեց նաև 3 հոգիներե բաղկացած Վերստուգի հանձնաժողով մը, հանձնին հոգեշնորհ Տ. Մաշտոց արքեպիսկոպոսի, պր. Նիքոն Ալեքսանյանի և պր. Գրիգոր Բեմբեգյանի, անոնց վրա պարտականություն

եղած է 3 281 100 նուրի, որուն դեմ, ինչպես տեսանք, նախատեսված է ներքին եկամուտներե 2 540 000 նուրի, տարբերությունը կներկայացնե Հոգևոր Ճեմարանի ծախսերը, որ կհոգացվին արտասահմանի նվիրատվություններով:

Մայր Աթոռի 1958 թվականի եկամուտներու և ծախսերու նախաճաշիվը հրատարակված է «Էջմիածին» ամսագրի ապրիլ ամսվան համարին մեջ:

Մայր Աթոռը այսօր գրեթե ինքնաբավ դարձած է և լայն հնարավորություններ ունի արտասահմանյան նվիրատվությունները տրամադրելու շինարարական հատուկ նպատակներու և Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանին:

Վերջին երեք տարիներուն ընթացքին արտասահմանի քեմերեն և այլ նվիրատվություններեն ստացված գումարները եղած են հետևյալները.

1955 թվականին՝	850 000	նուրի.
1956 »	2 060 000	»
1957 »	1 896 000	»
1958 »	2 987 000	»

Այսօր Մայր Աթոռի վարչական, տնտեսական և գրասենյակային աշխատանքներու անձնակազմը կբաղկանա 76 աշխարհական աշխատակիցներէ:

դնելով պարբերաբար քննել Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական գործունեությունը և հաշվապահական գործերը, ապա զեկուցելու համար արդյունքները Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Գերագույն Հոգևոր Խորհուրդին:

Անկեղծ գոհունակությամբ կհայտնենք, որ Մայր Աթոռի Վերստուգիչ հանձնաժողովը իր պարտքը կատարած է ամենայն բարեխղճությամբ և ձեռնհասությամբ, մեծապես սատարելով մեր տնտեսա-ֆինանսական կյանքի կարգավորման և կանոնավորության:

Է) ՄԱՅՐ ԱԹՐՈՒԻ ՕԺԱՆԴԱԿ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գեղարդի վանքին մեջ Մայր Աթոռ ունի 2 տնտեսություն.

1) ՄԵՂՎԱՌՈՒՄԱՐԱՆ, 160 փերակներով, նվիրատվություն լոգոնաբնակ մեծահարգ տեր և տիկին Սարգիս և Աստղիկ Քյուրճյաններու: Մեղվաբուծարանը Մայր Աթոռի կհայրաքյոք տարեկան շուրջ 1500 կիլոգրամ մեղր ամենարժեքի տեսակներ:

Ը) ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ինչպես հայտնի է Ձեզ, Մեր ընտրության հաշորդ օրերում իսկ հապենպ կերպով պատրաստեցինք և Ազգային եկեղեցական ժողովի վերջին նիստին ներկայացուցինք շինարարական աշխատանքներու ծրագիր մը իր ընդհանուր գծերով և Մեր անդամիկ կոնդակով Մեր սրբազան պարտականություններեն մեկը նկատեցինք վերանորոգել «մեր հայրենի սրբավայրերը» վանքեր և եկեղեցիներ, ինչպիսին են Ս. Հովսեփիմեն, Ս. Գայանեն, Խոր Վիրապը, Օշականը, Գեղարդը և ուրիշներ, որոնք մեր հոգևոր կյանքի սյուները կհանդիսանան ու հուշակված տանարները աղոթքի և ուխտի, և զմայլելի հուշարձանները հայ հարտարապետության փառքի»:

Այսօր, 3 տարի վերջ, հոգեկան բավարարության զգացումով մը Ձեք և Մեր Ազգի առաջ կներկայացնենք ցուցակը Մեր օրով ցարդ կատարված շինարարական աշխատանքներուն.

ա) Ս. Էջմիածնի հոգևորականության վրա.

- 1) Մայր Տանարի հատակի մարմարապատում.
- 2) Մայր Տանարի դասի մարմարյա բազրիքներու կառուցում.
- 3) Մայր Տանարի շրջափակի սալահատակում տուֆ փարով.
- 4) Սիւնդի շենքի բակի ձևավորում բազալտե աստիճաններով.
- 5) Մայր Տանարի շրջափակի գլխավոր հանապարհներու ասֆալտապատում.
- 6) Ս. Էջմիածնի հոգևորական ջրամատակարարման և կոյուղիի անցկացման աշխատանքներու 50 տոկոսի կատարումը.

Վերստուգիչ հանձնաժողովը այս տարի ձեռնարկեց և գլուխ բերավ մեծ աշխատանք մը ևս, այն է՝ ստուգումը և ցուցակագրումը և հատուկ մատյաններու մեջ արձանագրումը Մայր Աթոռի ամբողջ գույքի:

Ամիսներ տևող այս աշխատանքը արժանի է մեր գնահատանքին:

2) ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՄԸ,

բաղկացած այսօր 150 գլուխ անասունների, որ կապահովեն Մայր Աթոռի սեղանատան տարեկան պանիրը և մասամբ նաև միսը:

Անասնապահական այս տնտեսություններեն տարեկան կստացվի նաև մոտավորապես 100 կիլոգրամ բուրդ:

7) Ս. Էջմիածնի արևմտյան, արևելյան և հյուսիսային սահմաններու վրա սրբաբառաշ տուֆ փարե պարսպի կառուցում 850 մետր երկարությամբ, 5—6 մետր բարձրությամբ, որուն մեջ առնրված է նաև վեհարանի նոր շենքը.

8) Երեմիայի շենքի մասնակի վերանորոգում, փարե աստիճաններ մուտքերու առաջ և մայրերու ասֆալտապատում.

9) Տպարանի շենքի առաջին հարկի վերանորոգում.

10) Այլևայլ մանր վերանորոգումներ վեհարանի, Հոգևոր ձեմարանի և ուրիշ շենքերու վրա.

Կատարված այս բոլոր աշխատանքներուն համար ծախսված է շուրջ 3 500 000 ռուբլի:

բ) Շինարարական կատարված աշխատանքներ Ս. Էջմիածնի հոգևորականության համայնքի շինարարության վերաբերյալ.

1) Ս. Հովսեփիմեի տանարի ներքին վերանորոգումը.

2) Ս. Հովսեփիմեի վանքի շրջափակի սալապատումը, նոր փարե աստիճաններու կառուցումը և վանական շենքի վերանորոգումը.

3) Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցվո վերանորոգումը.

4) Թիթեղապատում Օշականի եկեղեցիի և մասնակի ներքին վերանորոգում.

5) Մասնակի վերանորոգումներ Երեմիայի Ս. Հովսեփիմեի, Ս. Սարգիս և Ս. Զորավոր եկեղեցիներուն վրա.

6) Փոքր վերանորոգումներ Գեղարդի վանքին մեջ.

7) Թիբեղապատում և փոքր նորոգում Դալարագյազի Ս. Խաչ վանքին մեջ.

8) Թիբեղապատում Լենինականի, Ստեփանավանի, Ռոստովի, Կրասնոդարի եկեղեցիներու տանիքներուն:

Այս աշխատանքներուն ընդհանուր արժեքը կհասնի մոտ մեկ միլիոն ռուբլիի:

Խորին երախտագիտությամբ այս առիթով անգամ մը ևս կհիշենք սրտարուխ նվերը Լոնդոնի մեր հայ հավատացյալներուն, որոնց լուսաներով վերանորոգվեցաւ Բջնիի պատ-

Այժմ կուգենք քանի մը խոսքով այստեղ կանգ առնել նաև մեր շինարարական ապագա աշխատանքներու ծրագրին վրա:

ա) Մայր Տաճարի վրա ծրագրած ենք կատարել հետևյալ աշխատանքները.

1) Մարմարապատում բեմի և ավանդատան և կառուցում մարմարե Ավագ Սեղանի: Ավագ Սեղանի շինության մարմար ստացած ենք արդեն Իտալիո Մոնտե-Կազինիի հաճեցե՞ն՝ Ռոզ-դե-Պորտոգալիո տեսակէն: Ավագ Սեղանը պի-



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԶԵԿՈՒՑՈՒՄ Է

մական Ս. Աստվածածին եկեղեցին, իսկ միլանաբնակ ազգայիններ տիար Երվանդ Հյուսիսյանի և Օնենիկ Մանուկյանի նվիրատվությամբ կվերանորոգվի, կապածառանա մեր հարտարապետության հրաշալիքներեն Ս. Հովսիսիմեն, իսկ Ղազարոսյան եղբայրներու նվերով հիմնովին պիտի վերանորոգվի Օշականի Ս. Մեսրոպի եկեղեցին՝ առաջիկա տարի: Եվ ինչպես պիտի տեսնենք բիշ հետո, առաջիկա տարվան ծրագրին մեջ նախատեսած ենք նորոգությունը Ս. Շողակաթի վանքին՝ նվիրատվությամբ հայեպարեակ տեր և տիկին Սուրեն և Շաֆե Գալենտերյաններուն:

տի կառուցվի հայտնի արվեստագետ-հարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի նախագծով.

2) Վերակառուցում Իշման Սեղանի նոր մարմարով, քանդակագործ, շրջապատված մարմարյա բազրիքներով.

3) Վերակառուցում Մայր Տաճարի հարավային փլած գմբեթի.

4) Վերակառուցում Մայր Տաճարի ամբողջ տանիքի, նոր տուփ քարով.

5) Նոր մետաղյա լուսամուտներ.

6) Քանդակագործ մետաղյա նոր ջահեր Մայր Տաճարի համար.



- 7) ներքին նկարագրողով Մայր Տա-
նարի՝ Հայ եկեղեցվո հատուկ սրբա-
պատկերներով, հայկական ռնով.
- 8) վերանորոգումներ հիմքերու վրա և
արտաքին պատերուն մեջ.
- 9) ելեկտրական ամբողջական հոր սարք.
- 10) կեդրոնական շենուցում:
- բ) Ս. Էջմիածնի հողամասի վրա.
- 1) Պարսպապատում հարավային սահ-
մանի, մեջև առնելով նաև Ղազարապա-
տը իր բոլոր շենքերով, շուրջ 150 մետր
երկարությամբ.
- 2) կառուցում հոր շխմումի և աշ-
տարակի՝ մեծ ժամացույցով, հյուսիսա-
յին կողմը.
- 3) վերակառուցում տպարանի շենքի
երկրորդ հարկի.
- 4) կառուցում երկրորդ հարկի մը Հո-
գևոր ձեմարանի շենքի երկու քերու
վրա.
- 5) Հիմնական վերանորոգում Երեմիա-
յի շենքի.
- 6) Ամբողջացում ջրամատակարարման
խողովակներու և կոյուղիի գետեղման
աշխատանքներու, ամբողջ հողամասի
վրա և բոլոր շենքերուն մեջ.
- 7) կեդրոնական շենուցում բոլոր շեն-
քերուն մեջ.
- 8) կառուցում մեծ կաքսայատան մը.
- 9) վերանորոգում և կահավորում հոր վե-
հարանի շենքի.
- 10) վերանորոգում Խրիմյան բանգարանի
շենքի.
- 11) վերանորոգում և կահավորում Ղա-
զարապատի բոլոր շենքերու.
- 12) վերանորոգում հին վեհարանի շեն-
քի, որ կոչված է վերածվելու հանգուցյալ
կարողիկոսներու հիշատակին նվիրված
բանգարանի.
- 13) կառուցում ելեկտրական ենթակա-
յանի մը՝ հատուկ Ս. Էջմիածնի համար.
- 14) Էջմիածնի հողամասի բոլոր շենքե-
րու ելեկտրական ցանցի փոխարինումը
նորով, բակի մեջ գետեղում ելեկտրական
մեծ լամպերու՝ հատուկ սյուներու վրա
հաստատված, գեղարվեստական ձևավո-
րումով.

15) Հեռախոսային հոր ցանցի անցկա-
ցում, ստորերկրյա խողովակներու սխ-
մանով.

16) կառուցում բուժարանի, դեղատան
և հիվանդանոցի հոր շենքի մը՝ Մայր
Արոտի միաբանության, պաշտոնեության
և ուսանողության համար.

17) Խոր հանրակացարանի մը կառու-
ցումը ձեմարանին համար:

գ) Շինարարական ծրագրեր Ս.
Էջմիածնի հողամասին դուրս.

Այստեղ մեծ կարևորությամբ կուգենք Ձե-
ր և Մեր ամբողջ ժողովուրդի շեքագին ուշա-
դրությունը հրավիրել մեծ և պատմական նշա-
նակություն ունեցող եկեղեցական-ազգային
այն գործին վրա, որ վերաշինություն է մե-
հնադարյան պատմական հուշարձան-ժանե-
րու և եկեղեցիներու:

Ինչպես հաստատեցիք, այդ ծրագիրը ար-
դեն գործարարության դրված է, և առաջին
պատմական եկեղեցին՝ Բջնիի Ս. Աստվածա-
ծինը վերանորոգված է:

Վերանորոգման ընթացքի մեջ են այս պա-
հուս Ս. Հովհաննիսի փառավոր տանարը և
Դավարացյալի Ս. Խաչ վանքը:

Հաջորդ տարի կվերանորոգվին Ս. Շողա-
կարը և Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցին:

Մեր ծրագիրը կընդգրկե վերանորոգություն-
ը նաև Ս. Գայանեի, Ս. Խոր Վիրապի, Ս. Գե-
ղարդի, Հառիհա, Հաղարծինի և Տարևի պատ-
մական վանքերու, ինչպես նաև վերանորո-
գումը շարք մը եկեղեցիներու, և առաջին
ներքին՝ Խոր Բայազետի Ս. Աստվածածնի,
Մուղնու Ս. Գևորգի, Բասարգեշարի, Ռաստո-
վի մոտ գտնվող Չալդըր, Թովտի և Մեծ-Սա-
լա գյուղերու եկեղեցիներու:

Ուրախությամբ կարձանագրենք, թե մեր
արտասահմանյան քեմերեն երկուրք խոստա-
ցած են իրենց վրա առնել վերանորոգումը
մեկական պատմական վանքի և արդեն իսկ
աշխատանքի սկսած այս նպատակով: Կակ-
նարկենք ֆրանսահայ քեմին, որ ստանձնած
է Ս. Գայանեի վերանորոգումը և Միացյալ
Նահանգներու Կալիֆոռնիո քեմին, որ ստանձ-
նած է Ս. Խոր Վիրապի վերանորոգումը:

Մագրված այս բոլոր շինարարական աշ-
ատանքները պիտի արժեն այսօրվան նա-
խատեսություններով շուրջ 40 000 000 ուրլի:

Թ) ՆԵՐՔԻՆ, ԹԵՄԵՐ

Ներքին քեմեր ըսելով կհասկնանք մեր
եկեղեցական քեմական կազմակերպություն-
ները՝ Հայաստանի և Սովետական Միության
մեջ:

Այսօր Հայաստանի սահմաններեն ներս
ունենք պատմական երկու քեմերը՝ Արարատ-
յան և Շիրակի, որոնց կեդրոններն են Նրևան

և Լենինական: Արարատյան հայրապետական
քեմը իբրև առաջնորդական փոխանորդ ունի
հոգեշնորհ Ս. Վահան վարդապետ Գալամ-
դարյանը:

Թեմը ունի իր քեմական խորհուրդը, կազ-
մված 1958 թվականի գարնան ամիսներուն,
և որ, առաջնորդական փոխանորդի հետ հա-

մախորհուրդ, կղեկավարե թեմի եկեղեցական-հոգևոր կյանքը:

Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդն է հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը:

Հայաստանի սահմաններեն դուրս մեր ներքին թեմերն են.

1) ՎՐԱՍՏԱՆԻ ԹԵՄԸ, որուն թեմակալ առաջնորդն է գերապատիվ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյան: Թեմը ունի իր թեմական խորհուրդը, որ անցյալ տարի վերակազմվեցավ:

2) ԱՂԵՐՔԻՋԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԵՍՏԱՆԻ ԹԵՄ: Առաջնորդական փոխանորդն է հոգեշնորհ Տ.

Տիրայր վարդապետ Մարտիկյան, որ կգործե թեմական խորհրդի աշխատակցությամբ:

3) ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԵՎ ՆՈՐ-ՆԱԿԻՋԵՎԱՆԻ ԹԵՄ: Թեմի առաջնորդն է հոգեշնորհ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյան: Թեմը ունի իր թեմական խորհուրդը, նախագահությամբ առաջնորդ հայր սուրբին:

4) ՄՈՍԿՎԱՅԻ ՀՈՎԿՈՒԹՅՈՒՆ: Առժամյա հոգևոր հովիվն է հոգեշնորհ Տ. Նդիշե վարդապետ Մարգարյան: Այստեղ տարիներն ի վեր կաշառնակարե արժանապատիվ Տ. Խաչատուր Բանան Հարությունյան: Հոգևոր հովիվ կողքին կա եկեղեցական խորհուրդ:

Ժ) ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԹԵՄԵՐ

Արտասահմանի մեր թեմերն են հետևյալները.

1) ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹԵՄ. կեդրոն՝ Թավրիզ: Առաջնորդական տեղապահ՝ Տ. Կարապետ ավագ Բանան Մանուկյան:

2) ԹԵՀՐԱՆԻ ԹԵՄ. կեդրոն՝ Թեհրան: Հոգևոր հովիվ և թեմական գործակալ՝ Տ. Հովհաննես ավագ Բանան Հանյան:

3) ՍՊԱՀԱՆԻ ԹԵՄ. կեդրոն՝ Նոր-Ջուղա: Կրոնական խորհրդի փոխ-նախագահ՝ Տ. Ներսես ավագ Բանան Դավթյան:

4) ՆԻՒՊՏՈՍԻ ԹԵՄ. կեդրոն՝ Կանիս: Առաջնորդ՝ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյան:

5) ԻՐԱՔԻ ԹԵՄ. կեդրոն՝ Բաղդադ: Առաջնորդ՝ Տ. Ջգոն ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյան:

6) ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԹԵՄ. կեդրոն՝ Փարիզ: Հայրապետական պատվիրակ և առաջնորդ՝ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյան:

7) ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԹԵՄ. կեդրոն՝ Աթենք: Հայրապետական պատվիրակ և առաջնորդ՝ Տ. Խահակ վարդապետ Դադարյան:

8) ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵՅԱՆ ԹԵՄ. կեդրոն՝ Նյու-Յորք: Առաջնորդ՝ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայան:

9) ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄ. կեդրոն՝ Լոս-Անջելոս: Առաջնորդ՝ գերաշնորհ Տ. Բաբգեն եպիսկոպոս Վարժապետյան:

10) ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄ. կեդրոն՝ Բուենոս-Այրես: Հայրապետական պատվիրակ և առաջնորդ՝ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան:

11) ԱՆԿԻՆԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԿՈՒԹՅՈՒՆ. կեդրոն՝ Լոնդոն: Հայրապետական պատվիրակ՝ գերաշնորհ Տ. Պսակ եպիսկոպոս Թումայան:

12) ՄԱՆՉԵՍՏԵՐԻ ՀԱՄԱՅՆՔ. կեդրոն՝ Մանչեսթեր: Հոգևոր հովիվ՝ արժանապատիվ Տ. Աշոտ Բանան Տեր-Հարությունյան:

13) ՎԻԵՆՆԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԿՈՒԹՅՈՒՆ. կեդրոն՝ Վիեննա:

14) ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ԹԵՄ. կեդրոն՝ Բուխարեստ: Թեմական խորհուրդ:

15) ԲՈՒԼԴԱՐԱՀԱՅ ԹԵՄ. կեդրոն՝ Սոֆիա: Թեմական խորհուրդ:

16) ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵՔԻ ԹԵՄ. կեդրոններ՝ Կալկաթա և Սիդնեյ: Հայրապետական պատվիրակ և առաջնորդ՝ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Դադարյան:

Մայր Աթոռը բնակաւնոն հարաբերություններու մեջ կգտնվի իր բոլոր թեմերուն հետ. համաձայն Հայ Եկեղեցւոյ կանոններուն և ավանդույթանց:

Վերջերս միայն անբնական ու կեդրոնախույս որոշ երևույթներ հանդես եկան Պարսկաստանի, Հունաստանի և Ամերիկայի թեմերուն մեջ, իբր հետևանք Ամբիլիասի հերձվածողներու տխուր գործունեության:

Ժամանակագրական կարգով առաջին նման երևույթը հայտնվեցավ Ամերիկայի Միացյալ Նահանգներուն մեջ, երբ 1956 թվականի աշնան Մայր Աթոռի և օրինավոր առաջնորդաբաններուն հեղինակության շենքարկվող Բանի մը անջատյալ եկեղեցիներ, հրապարակալին հայտարարությամբ մը փորձեցին իրենք գիրենք պաշտոնապես բաժնված նկատել Հայ Եկեղեցւոյ միակ կեդրոն բազմադարյան Ս. Էջմիածնեն և կապվի Ամբիլիասի հերձվածող Աթոռին, որ ապօրինի կերպով կգործե կիլիկիո Կաթողիկոսության անունով:

Մենք Մեր 1957 թվականի դեկտեմբեր 20 թվակիր կոնդակով, ինչպես գիտեք, հենվով մեր Եկեղեցւոյ սուրբ կանոններուն, ավանդություններուն և պատմականորեն ճշտված իրավասությանց սահմաններու դրությամբ վրա, ինչպես և մեր համայն հայ ժողովուրդի

գիտակցության վրա, չեղյալ հռչակեցին՝ այդ բաժանումը, իսկ Անրիխասի հերձվածողներն և հափշտակություն: Մենք միաժամանակ կոչըրինք բաժնվող եկեղեցիներուն՝ անդադարաւեալ իրենց սխալին վրա և ընդմիջտ մնալ Հայ եկեղեցւոյ սիրո միութեան մէջ, ամենայն հաւոյց Ս. Էջմիածնի շնորհներուն ներքին:

Անրիխասի գործունեությունը սակայն շարունակւոյց և փորձեց իր ձեռքերը երկարել Պարսկաստան, պարտադրելով այնտեղ հոգևոր դասին և հավատացյալ ժողովուրդին ձեռնալու բաժանում մը Ս. Էջմիածնէն, առանց ունենալու որևէ հիմք կամ պատճառ բաժանման:

Ի պատասխան Թեհրանի թեմական խորհուրդի մարտ 29 թվակիր գրության, Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհուրդը իր 2 մայիս 1958 թվակիր պաշտօնական նամակով հստակ կերպով պարզեց այս արարի տխուր պատկերը, հերքելով բոլոր այսպես կոչված «հիմունք»-ները, որոնք իբր հիմք էին ծառայեր Թեհրանի թեմի բաժանման փորձին: Այս պարագային ալ Մայր Աթոռը բաժանման այդ փորձը հռչակած է չեղյալ

և հրավիրած է Թեհրանի թեմական իշխանությունը՝ վերահաստատել իր պատմական բնականոն կապերը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ:

1958 թվականի հուլիս 24-ին հուլյանման գրություն մը ստացանք նաև Թավրիզի թեմական խորհուրդէն, որուն Մեր 1 սեպտեմբեր 1958 թվակիր ատասխանը եղավ հուլյնը, ինչպես Թեհրանի թեմի պարագային:

Հատկաւշական է այն պարագան, որ ոչ Թեհրանի և ոչ ալ Թավրիզի ժողովներուն որոշումներուն տակ ստորագրած չէ ոչ մէկ հոգևորական:

Վերջերս շփոթ կացություն մը ստեղծւեցաւ նաև Հունաստանի մեր թեմին մէջ, հուլյն հերձվածող Անրիխասի գործունեությամբ, որով Արեւել ուղարկվեցաւ Անրիխասի միաբան արեղա մը, առանց որևէ օրինավոր հիմքի, նպատակ ունենալով տիրանալ Էջմիածնական հունանայ թեմին, չեզոքացումով օրինավոր Մեր ներկայացուցչին, ու 1957 թվականի հուլիս 7-ի պաշտօնագրով Հայրապետական պատվիրակ և ժամանակավոր առաջնորդ էր նշանակված հունահայ թեմին:

ԺԱ) ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐՈՒՆ

Մեր բնորոշյան իսկ օրերուն, արտասահմանէն շատ մը պատգամավորներ՝ Լոնդոնէն, Ամերիկայի Միացյալ Նահանգներէն և Եգիպտոսէն փափագ էին հայտնաւած, որ մեր ժողովուրդի հոգևոր-ազգային կյանքի Սփյուռքի պայմաններուն մէջ անհրաժեշտ էր հայրապետական այցելություն մը կազմակերպել, ավելի ևս ամրապնդելու համար հոգևոր կապը Մայր Աթոռի և Մեր հավատքի կեդրոն Ս. Էջմիածնի միջև, առավել ևս կենդանութեան շունչ տալու համար Սփյուռքի ցիրուցան մեր ժողովուրդի հայկական գիտակցության:

Եվ իրոք, Մենք ևս համոզվեցանք, որ նման հովվապետական այցելություն մը անհրաժեշտ էր և օգտակար, մանավանդ որ Մեր հայրապետական գործունեության առաջին իսկ ամիսներէն հայտնի դարձաւ, որ մեր եկեղեցին կտունվեր նոր ժամանակաշրջանի մը սեմին և նոր հեռանկարներ կրացվէին մեր առջև, ստեղծված ներքին և արտաքին նպաստավոր, առաւելապահ պայմաններուն բերումով:

Մեր պարտքն էր օգտագործել բոլոր այս նպաստավոր պայմանները՝ ի շինություն մեր եկեղեցւոյ և Մայր Աթոռի:

Մենք արտասահման գացինք՝ ունենալով երեք հստակ նպատակներ.

1) Ամրապնդել Սփյուռքի հայության կապը Ամենայն Հայոց Հայրապետության Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ, լոյս և հույս բաշխելով մեր ժողովուրդին՝ Լուսավորչի անմար կանթեղէն:

2) Ապահովել Մայր Աթոռը արտաբովս նվերներով մեր ժողովուրդին, կենսագործելու համար Մեր շինարարական ծրագիրները:

3) Անձամբ մասնակցել Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի բնորոշյան և օժման, իբր պատասխան այց՝ 1945 թվականի հունիսին Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս եղանկանիշատակ Տ. Տ. Գարեգին Հովսեփյանցի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բնորոշյան մասնակցության:

Երջանիկ ենք հաստատելու, որ առաջին Մեր երկու նպատակները լիով կենսագործվեցան և մենք բոլորս, Հովվապետ և ժողովուրդ, ցնծության և հոգեկան մխրաբանության պատմական օրեր ապրեցանք, Մեր արտասահման այցելության ամբողջ ճանապարհի երկայնքին:

Նույն ուրախությամբ պետք է հաստատենք, թե իրականացաւ նաև Մեր երկրորդ իղծը: Գրեթե ամեն տեղ ուր Մենք գտնվեցանք, մեր ժողովուրդի հարազատ զավակներէն շատերը առատորեն իրենց հոգի պար-

գեր ընծայեցին մեր շինարարական ձեռնարկներու հաջողության համար:

Փա՛ռք և պատի՛վ հայ ժողովուրդին:

Մեր հանապարհորդությունը տեղեց ավելի քան երեք ամիս՝ 1 փետրվարին մինչև 20 մայիս: Այցելեցինք հետևյալ հայ գաղութները. Փարիզ, Քեյրուք, Կահիրե, Ադնանդուրիա, Միլան, Վենետիկ, Կրկին Փարիզ, Մարսել, Լիոն, ապա Լոնդոն, Մանչեստր, Լոռեն Փարիզ և Մոսկվա:

Ամեն տեղ ուր գացինք, արժանացանք մեր ժողովուրդի խոր հարգանքին և սիրուն, ու միաժամանակ վայելեցինք հարգանքն ու բացառիկ ուշադրությունը պետական ամենաբարձր իշխանություններու, բոլոր եկեղեցիներու բարձրաստիճան հոգևոր պետերու և մեր այցելած երկիրներում մեջ ապրող ժողովուրդներու:

Ինչպես հայտնի է Ձեզ, Մեր հանապարհորդության նկարագրությունը, բոլոր մանրամասնություններով, առարկան դարձավ այդ նպատակին նվիրված սովոր հատորի մը, որ կկրն «ՌԻԶՎԻՈՐՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶ-ԳՆԵ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՍ» անունը, և որ լույս տեսավ Ս. Էջմիածնի մեջ 1957 թվականին, իսկ երկրորդ ապագրությունը՝ Քեյրուք, 1958 թվականին:

Առասանմանյան մեր մյուս քեմերը այցելելու կրկնակի հրավերներուն ընթացք տալու Մեր ալ ցանկությունը հետաձգելով մոտիկ ապագային, հարմար և անհրաժեշտ գտանք 1957 թվականին հովվապետական այցելության ելլել մեր ներքին քեմերը:

Մեր հովվապետական առաջին այցելությունը տվինք Շիրակի քեմին 1957 թվականի ապրիլ 26-ին: Արժանացանք Շիրակի հավատացյալ ժողովուրդի ջերմ և խաղաղառն ընդունելության: Պատարագեցինք և Բանիցու Բարոզեցինք Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցիին մեջ, այցելեցինք մոտակա Հառիճա և Մարմաշենի վանքերը և հոգեպետ մխիթարեցինք Մեր հավատացյալ հոտը:

Մեր հովվապետական երկրորդ այցելությունը տվինք Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի քեմին մայիս 17-ին: Այդ օրերը պատմական օրեր եղան քեմի հայ հավատացյալ ժողովուրդին համար: Մատուցվեցավ սուրբ պատարագ Ռոստոմի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիին մեջ և կատարվեցան փառավոր հանդիսություններ ժողովրդական խանդավառ և ջերմ մրնոխորձի մը մեջ: Այցելեցինք նաև պատմական Ս. Խաչ վանքը և մոտակա Թոփտի, Չալդիր և Մեծ-Սալա հայ գյուղերու եկեղեցիները, ուրախացնելով հեռավոր այդ ափերուն վրա ապրող Մեր հոտը:

1957 թվականի հուլիս 5-ին Մեր հաջորդ հովվապետական այցելությունը կատարե-

ցինք ղեպի Վրաստան, որպես հյուրը Համայն Վրաց պատրիարք և Կաթողիկոս Նորին Սրբություն Մելիքսեդեկ Գ-ի: Այստեղ ևս ակնանտես եղանք հայ և վրաց ժողովուրդներու ջերմ ընդունելության և համաժողովրդական խանդավառության: Պատարագեցինք և Բարոզեցինք Թբիլիսիի հայոց պատմական ուխտավայր և առաջնորդանիստ Ս. Գևորգ եկեղեցիին մեջ, ապա «Էջմիածին» եկեղեցիին մեջ: Աղոթեցինք նաև վրաց Ս. Սյուն Մայր Տաճարին մեջ: Ուխտ կատարեցինք նաև վրաց հնագաղթյան պատմական վանք Մցխեթայի տաճարին մեջ:

Սեպտեմբեր 20-ին այցելեցինք Բաքվի հայոց քեմը և տեղվույն հայոց Ս. Գրիգոր Եկեղեցի մեջ սուրբ պատարագի մատուցմամբ և Բանին կենաց Բարոզությանը մխիթարեցինք Մեր հոգևոր հոտը: Այցելեցինք ապա Կիրովաբադի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ բազմաճակատ ժողովուրդին տալով ողբույնն ու օրհնությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Ինչպես ամեն տեղ, այստեղ ևս ակնանտես եղանք ժողովրդական խանդավառ և հուզիչ ցույցերու՝ ի նշան հոգեկան ուրախության:

Սեպտեմբեր 25-ին այցելեցինք լեռնային Ղարաբաղի ինքնավար հայաբնակ մարզը, արժանանալով Ղարաբաղի հայ ժողովուրդի ջերմ ընդունելության: Տեսանք պատմական Շուշիի ավերակները, անոր հույակապ Ս. Ամենափրկիչ եկեղեցին՝ կիսավեր վիճակի մեջ, անցյալի տխուր ղեպերու հետևանքով: Տեսանք նաև Ղարաբաղի մայրաքաղաք հորակերտ Ստեփանակերտը, ուր կապրի մոտ 18 000 հայ բնակչություն մը՝ խաղաղ ու բարգավաճ ու շինարար կյանքով:

Սեպտեմբեր 26-ին այցելեցինք նաև պատմական Դաճաճասարի վանքը, երբեմնի Աղվանից Կաթողիկոսության կեդրոնը: Դաճաճասարի եկեղեցին, հայ ճարտարապետության հույակապ կորոզ մը, այսօր ալ կանգուն և լավ վիճակի մեջ է, գուրգուրանքի առարկա մոտակա Վանք գյուղի հայ ժողովուրդին:

Մեր վերջին այցելությունը կատարեցինք 1957 թվականի դեկտեմբեր 8-ին Երևան, Արարատյան հայրապետական քեմին, ուր պատարագեցինք առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցիին մեջ և ապա կարճ արարողություններ կատարեցինք Երևանի Ս. Հովհաննես և Ս. Զորավոր եկեղեցիներում մեջ:

Ներքին մեր բոլոր քեմերում տված վերոհիշյալ այցելություններուն ընթացքին ուրախությունը ունեցանք վայելելու նաև հարգանքը և բացառիկ ուշադրությունը պետական ամենաբարձր իշխանություններու, Մեր այցելություններու առիթով անոնց կազմակերպած ընդունելությանց ընթացքին:

ԺԲ) ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՎԵՐԱԲԱՑՈՒՄ

Իր ժամանակին, այսինքն 1956 թվականի վերջերս և այնուհետև, Մենք զանազան առիթներով հայտնեցինք այն մասին, թե Սոցիալական կենդանական կառավարության մեծագույն Վարչապետի 1956 թվականի մայիս 12-ի մեր ունեկողության իբրև արդյունք, սկզբունքային համաձայնություն տրված էր, որպեսզի Հայաստանի և դրացի հանրապետություններում մեջ հայկական նոր եկեղեցիներ վերաբացվին, համաձայն օրենքի տրամադրություններում, հավատացյալներու դիմումներում հիման վրա:

Մենք երախագիտությամբ ողջունեցինք պետական այս բարյացակամ բարձր վերաբերմունքը և աշխատեցանք կենսագործել գայն Մեր հեղափոխությանը և միջոցներուն ներած չափով, որովհետև եկեղեցիներու վե-

րաբացումը անհրաժեշտորեն կապված է եկեղեցական շենքերու վերանորոգման և բացվող եկեղեցիները հոգևոր պաշտոնյաներով օժտելու հարցերուն հետ:

Ցարդ վերաբացվեցան կարգ մը եկեղեցիներ և վանքեր Հայաստանի մեջ, որով մեր երկրին մեջ այսօր կգործեն 56 եկեղեցիներ, վանքեր և ուխտատեղիներ:

Մենք հույս ունինք, որ երկու տարի առաջ առաջադրված եկեղեցիներեն կվերաբացվին շարք մը նոր եկեղեցիներ նաև Վրաստանի, Ադրբեջանի, Հյուսիսային Կովկասի և Անդրկասպյան երկրներուն մեջ, Պետական իշխանության բարյացակամությամբ, ի միջոցառություն հայ հավատացյալ ժողովուրդի և ի գոհունակություն Մեզ:

ԺԴ) ԿԱՀԻՐԵԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ

Արտասահման Մեր նախադրանքային գլխավոր արդյունքներեն մեկը եղավ Կահիրեի մեջ գումարված Եպիսկոպոսական ժողովը 1956 թվականի մարտ 5—8 օրերու ընթացքին:

Մեր նախագահության տակ գումարված Եպիսկոպոսական այս ժողովին մասնակցեցան մեր նվիրապետական բոլոր Արքունքը՝ Կոստանդնուպոլսի պատրիարք ամենապատիվ Ս. Գարեգին արքեպիսկոպոսը, Երուսաղեմի պատրիարքական տեղապան Ս. Նդիշե սրբազանը և գրեթե մեր բոլոր բնակալ առաջնորդները:

Եպիսկոպոսական ժողովին մասնակցեցավ նաև Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը իր Եպիսկոպոսական դասով, Արքոպետ տեղապան Ս. Նորեն Եպիսկոպոս Բարդանի գլխավորությամբ:

Սույն ժողովին մասնակցող արքեպիսկոպոսներու և Եպիսկոպոսներու թիվը 18 էր: Եպիսկոպոսական ժողովին ֆենության առնվեցան հետևյալ հարցերը.

- 1) Ընդհանուր գեկուցում Մայր Արքոպետի կաթողիկոսության մասին:
- 2) Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո սահմանադրության հարց:
- 3) Հայաստանյայց Եկեղեցվո Կանոնագրքի կազմության հարց:
- 4) Ս. Գրիգորի տպագրության 300-ամյակի առթիվ Աստվածաշունչի աշխարհաբար բարգավաճության հարց:
- 5) Էքումիսմենի Հոգևոր ճեմարանի առավել կազմակերպության հարց:
- 6) Արտասահման հոգևորականներ էքումիսմենի հրավիրելու հարց:
- 7) Մայր Արքոպետի կողմից հոգևոր կանառ մը ստեղծելու հարց:

8) Ս. Էքումիսմենի և նվիրապետական մյուս Արքունքներու փոխհարաբերության ծրագիր մը պատրաստելու հարց:

9) Հայաստանյայց Եկեղեցվո բարեկարգության հարց:

10) Քրիստոնեական այլ եկեղեցիներու հետ հարաբերության հարց:

11) Կիլիկիո կաթողիկոսի ընտրության հարց:

Եպիսկոպոսական սրբազումար ժողովը, ֆենության առնելով այս հարցերը, ընդունեց համապատասխան որոշումներ, որոնցմե ոմանք ցարդ արդեն իրագործված են, իսկ կարգ մը ուրիշ որոշումներ կմնան մոտիկ ապագային իրագործելի:

Մենք կուզենք այս առթիվ անգամ մը ևս շեշտել սիրո և միասնության այն ոգին, որ ստեղծվեցավ Եպիսկոպոսական ժողովի գումարման առթիվ, ի պատիվ ժողովին մասնակցող բարձրաստիճան մեր հոգևորականության: Մենք կաղոթենք, որ այդ ներքին սերը և միասնությունը ամուր և տևական մնան մեր Եկեղեցիին մեջ, որպեսզի կարենանք առավել շենցնել և գորացնել այս պատմական պատկառելի սուրբ հաստատությունը և պաշտպանել գայն ամեն տեսակ փորձություններու և կեղծոնախոյս ձրգտումներու դեմ:

Մենք կառաջարկենք, որ Եպիսկոպոսական ժողովը ևս, որուն կանդամակցին Ձերդ Սրբազնությունները, վերստին իր ուշադրության առարկա դարձնեն Կահիրեի Եպիսկոպոսական ժողովի օրակարգի հարցերը, Վերջին երկու տարիներու փորձի լույսի տակ, նպատակ ունենալով գործնական նոր թելադրություններ կատարել արված որոշումներու կենսագործման համար:

ժԴ) ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱՅՈՈՒԻ ՏԱԳՆԱԳՐ

Վերև հիշեցին, քե արտասահմանի Մեր հանապարհորդության տուն տվող նպատակներեն մեկն էր նաև Մեր մասնակցությունը Կիլիկիո կաթողիկոսի ընտրության և օծման:

Դժբախտաբար ուրախությամբ չենք կրնար խոսիլ այս հարցի մասին, որովհետև Անթիլիասի մեջ ստեղծված մթնոլորտը այդ օրերուն հետո էր ֆրիստոնեական սիրո և ազգային միասնության պատվիրաններեն:

Կոստանդնուպոլսի և Նրուսադեմի Պատրիարքական մեր Արքոնեքոն և այնտեղ հավաքված բոլոր եպիսկոպոսներու, ինչպես և Կիլիկյան Արքոնի եպիսկոպոսներու մեծամասնությամբ՝ համերաշխության կոչերը, ինչպես գիտեք, լսելի չեղան Կիլիկյան երեք եպիսկոպոսներու կողմն, որոնք, մոռնալով իրենց հավատարմության ուխտը, խորացուցին անհասկացողությունները, որ գոյություն ունեին արդեն Կիլիկյան Արքոնի միաբանության և ժողովրդի ծոցին մեջ:

Մենք Անթիլիաս մեկնելով, հույս ունեինք մեղմել ներքին հակամարտությունները, և փոխադարձ հասկացողության և խաղաղության մթնոլորտի մեջ կատարել Կիլիկիո նոր կաթողիկոսի ընտրությունը: Մեր հույսերը, սակայն, ի դերև ելան և Մենք վշտով տեսանք և հաստատեցինք, քե երկփեղկույն ողբերգական իրականություն մըն է, անկախ Մեր կամքեն և հակառակ Մեր կամքին:

Ստեղծված այս պայմաններուն մեջ Մեր ներկայությունը Անթիլիասի մեջ այլևս անպատակ դառնալով: Մեր վերջին հայրապետական հորդորը և հայրական օրհնությունը տալով Արքոնին և ժողովուրդին՝ մեկնեցանք դեպի Կահիրե:

Մեր մեկնումեն հետո, Անթիլիասի մեջ երկփեղկույն ատավել տագնապալի դարձավ, միակողմանի ընտրությամբը Զարեհ եպիսկոպոս Փայասյանի:

Կահիրեի եպիսկոպոսական ժողովը, անդադառնալով Կիլիկյան Արքոնին մեջ ստեղծված տագնապին, իր Ե ճիստին մեջ 1956 թվականի մարտ 7-ին, Անթիլիասին առաջարկեց ձեզ ծանոթ Համաձայնագիրը, դարձանելու համար տագնապը և Արքոնեն ներս վերանաստատելու համար միությունը և ներքին խաղաղությունը:

Եպիսկոպոսական ժողովի կազմած Համաձայնագիրը ոչ միայն մերժվեցավ, այլ հույնիսկ փորձ մը չեղավ Զարեհ եպիսկոպոսի կողմն, Համաձայնագրի մեկ ուրիշ բաձնակով մը փոխադարձ հասկացողության և խաղաղության հասնելու:

Այնուհետև մինչև 1956 թվականի սեպտեմբեր 2-ը հորդորներ և կոչեր բազում

անգամներ հնչեցին Մայր Արքոնեն, Նրուսադեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքականներեն և բարձրաստիճան հոգևորականներեն, ինչպես նաև ողջամիտ և սրացալ ազգայիններեն, բայց այդ բոլորը մնացին «ձայն բարբառոյ լանապատի»:

Այսպիսով 1956 թվականի փետրվար 20-ին, Անթիլիասի Ս. Տաճարեն դուրս կատարված միակողմանի ընտրության հաջորդեց 1956 թվականի սեպտեմբեր 2-ի ոչ կանոնական արարողությունը Ս. Զարեհ եպիսկոպոսի վրա, մասնակցությամբ 2 հայ եպիսկոպոսներու և մեկ ասորի եպիսկոպոսի:

Մենք Մեր 1957 թվականի դեկտեմբեր 20-ի կոնդակով հշտեցինք Մայր Արքոնի և մեր Եկեղեցվո դիրքը, հայտնելով ի գիտություն Հայ Եկեղեցվո հոգևոր դասին և մեր ժողովրդյան, քե նման արարողություն մը մեր Ս. Եկեղեցվո կանոններուն և ավանդությանց լույսին տակ, հնարավոր չէ կաթողիկոսական օծում նկատել:

Միայն Եկեղեցվո լրությամբ, նվիրապետական բոլոր Արքոններու գործակցությամբ և Մայր Արքոն Ս. Էջմիածնի հեղինակությամբ կազմված բանաձևի մը հիման վրա կարելի կրնա դառնալ Զարեհ եպիսկոպոսի կաթողիկոսության օրինականացումը:

Բոլորիս ծանոթ է, քե Կիլիկյան Արքոնի անցյալին մեջ, անոր պատմության փայլուն էջերու կողքին, կան նաև բազմաթիվ տխուր էջեր, որտեղ արձանագրված են ապօրինի և ոչ կանոնական ձեռնադրություններ և կաթողիկոսական օծումներ, որոնք իրավամբ երբեք ալ վավերական չեն նկատված Հայ Եկեղեցվո նվիրապետության և պատմության դատաստանի առջև: Նման արարքներ եղած են ու կմնան պարզ անկարգություններ՝ գուրկ որևէ հոգևոր, բարոյական և ազգային նշանակություն:

Այդպիսին է և այդպիսին կմնա նաև՝ Մեր օրերուն Ս. Զարեհ եպիսկոպոս Փայասյանի պարագան, երբ ինքը և իր շուրջիները իմաստությունը չունենան դառնալու իրենց անհույս նամքեն:

Այստեղ չի վերջանար սակայն Մեր խոսքը Անթիլիասի մասին, որովհետև Զարեհ եպիսկոպոսի և իր գործակիցներու արարքը, իր հետևանքներով, ավելի քան մեկ տարին ի վեր ահա, Կիլիկյան Արքոնի սահմաններեն դուրս ելած է, և իր կատարած ոտնձգություններով Ամերիկայի Միացյալ Նահանգներու մեր երկու քեմերուն և Խաղաղ երկու քեմերուն մեջ, կգերազանցե Կիլիկյան Արքոնեն ներս անցյալին մեջ կատարված հակականոնական արարքներ:

Մեր հաշորդներուն հավանաբար անհավա-
տալի կըլի, քե ինչպէս Հայ եկեղեցւոյ բարձ-
րաստիճան երկու-երեք հոգեւորականներ
իրենց իբրև միակ զենք ընտրած ըլլալով ֆա-
ղաբակեան անխիղճ վերագրումները Ս. էջ-
միածնի և Մայր Աթոռի հավատարիմ մեր հո-
գեւորականության և ժողովուրդի դէմ, կօգ-
տագործեն պարզապէս ժամանակավոր կեր-
պով ստեղծված միջազգային ֆաղաբակեան
իրադրութիւնը, գործադրութեան ղեկիւ հա-
մար արտասահմանի Հայ եկեղեցիի հիմքեր
հանդէպի սահմանված և Սփյուռքի ցիւրցան
հայ ժողովուրդը իր Սրբութիւն Սրբոց Ս. էջ-
միածնեն հոգեպէս անջատելու ծրագիրը:

Սակայն դառն նշմարտությունը այս է։ Այո, նշմարտություն է Ջարեն և Խորեն եպիսկոպոսները այդ փորձը։ Ճշմարտություն չէ սակայն այդ փորձի իրականացումը։

Մենք չենք կրնար հավատալ երբեք այդպիսի արարեաներու հաջողության: Անհնար է, որ արտասահմանի մեր հարազատ ժողովուրդը նման դավադրական փորձերու զոհ երթա, ինչն ան առեւն ան հպարտության հայու պանծալի անունը կկրէ և անհրաժեշտ է իր բրիտանեական հավատքը՝ Փրկչի իման տեսիլով լուսավորված:

Այս հանդիսավոր առիթով, Մենք անգամ մը ևս կհայտարարենք, քե Հայաստանայց Առաքելական Ս. հիկեդեցին մի է և անբաժան, իր գլուխը ունենալով աստվածակառույց Ս. Էջմիածինը, և, մեր սուրբ կառուկներու, արանդուրյան և Հայ Ազգի խղճի առջև հնարամբ չէ անջատվի Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն:

Մեր բոլոր նվիրապետական Աթոռները,
պատմական իրավասությամբ իրենց սահ-

մանեհրուն մեջ, և հայոց բոլոր եկեղեցիները և համայն հավատացյալ հաշ ժողովուրդը անխտիր կան և կմնան հոգևոր իշխանության ներքև Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության:

Հայ ժողովուրդի հոգևոր և ազգային կյան-
ֆի անխորտակելի կանոնն է այս, աստվա-
ծային հախախնամությամբ և Մեր Ազգի վա-
ռավոր պատմությամբ նվիրագործված:
Կիլիկյան Արոտի այս տխուր տաղնասյի
մասին խոսել եետո, Մեզ համար հույժ մխի-
թառկան է հաստատել օրինապան, կորովի
կեցվածքը Տանն Կիլիկիո միաբանության և
հավատացյալ ժողովուրդի մեծամասնության,
ի պաշտպանություն եկեղեցական կանոննե-
րու, ավանդություններու և ի պաշտպանու-
թյուն մանավանդ Հայ եկեղեցվո միության և
ներքին համեմատության սրբազան սկըզ-
բուններուն:

Այդ օրինապան միաբանության և հավատարիմ ժողովուրդի գլուխը կանգնած է կիլիկյան Աթոռի տեղապան ամենապատիվ Տ. Խաղաբեկյանիսկայոս Աջապահյանը, իբրև պահապանը և պաշտպանը Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի լավագույն ավանդություններուն և արժանավոր հաջողքը Աջապահյաններու տոհմին:

Մենք սիրով կաղումենք նորին Արքագնության ներկայությունը մեր մեջ մեր այս ուրախության օրերուն, վստահ ըլլալով, որ Աստուծոյ օգնականությամբ և մեր ժողովուրդի կազմակերպված կամով վերջ կգանն Կիլիկյան Աթոռի տագնապը, հուրախություն Կիլիկյան օրինապան միաբանության, ի միխթարություն մեզ բոլորիս և ի շինություն մեր Ս. եկեղեցւոյ:

ԺԵ) ԵՐՈՒՍՊԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Մէր հայապետության այս երեք տարի-
ներու եկեղեցական կյանքի վերազարթոնքի
և վերելքի նախապարհին, Անթիլիասի տագ-
նապի կողքին, յիշուր ունեցանք ականատես
ըլլալու նաև մեկ ուրիշ ներքին տագնապի, որ
զարգացավ Երուսաղեմի հայոց Պատրիար-
քական Աթոռնէ ներս: Երուսաղեմի Աթոռի
ղեկավար իրենց բոլոր մանրամասնություն-
ներով ծանօթ են ձեզ բոլորիդ և մեր ամբողջ
ժողովուրդին:

Յրուադեմի Պատրիարքական Աթոռի միաբանության և նախկին տեղապան Նիլիշեպիսկոպոս Տերտեչյանի միջև ծագած անհամաձայնությունները հետզհետե խորանալով, հաճեցեալն այն կացութեան, որ միաբանութունը, իր ճնշող մեծամասնությամբ, 1956 թվականի հոկտեմբեր 2-ի և 13-ի Միաբանական ժողովներուն որոշումով պաշտոն-

Նաև՛ հռչակեց զայն տեղապահական և լուսարարապետական պաշտոններեն՝ ծանր ամբաստանություներու ներքև:

Այդ օրերուն Նիդշե սրբազանը կգտնվեր Մայր Աթոռ: Մենք, ծանոթանալով կացության, հորդորեցինք զինքը ժամանակ մը չվերադառնալ Ներսադեմ և ատենի մը համար մնալ Ս. Էջմիածին, ի շահ Ներսադեմի Աթոռի վարկիւն և իր իսկ անձնակազմէն ներդրեալութեամբ: Նիդշե սրբազանը Մեզ խոստացաւ որեւէ դժվարութիւն չհարուցել, և ավելցուց նոյնիսկ, թե պէտքի բաշխութեամբ գործենեն: Այս խոստումներով ան բաժնակեցաւ Մեզմէն նոյնմբեր 5-ին:

Դժբախտաբար սակայն հետագա դեպքերը հակառակը ցույց տվին և Երուսաղեմի Պառիզաբական Աթոռը շատ տխուր տագնապնեւանցուց և մինչև այսօր այ այս տագնապնեւանցը

կշարունակվի ի վնաս մեր Եկեղեցիին և Երուսաղեմի Արքոպիսկոպոսին:

Երուսաղեմի Ս. Արքոպիսկոպոս Միաբանական ընդհանուր ժողովը 1957 թվականի մարտ 5-ի իր որոշումով Եղիշե Եպիսկոպոսը ազատ արձակեց միաբանության շարքերէն, Մայր Արքոպիսկոպոսին ապացույցներ և փաստաթղթեր, որոնք կ'իսկապեն անոր դեմ:

Հենկով այդ բոլորի վրա, Մենք, ցավ ի սիրտ, ստիպված եղանք 1957 թվականի ապրիլ 13-ի հայրապետական Մեր վնոով փիլոնագրկման պատիժ սահմանել Եղիշե Եպիսկոպոսի համար, կարգադրելով միաժամանակ, որ բաշվի Ս. Բերդեհեմի վանքը, մինչև Եպիսկոպոսական ժողովի մը գումարումը, ուր անոր ձկամամար Եշովեր վերջնական վերաբերմունք:

Եղիշե Եպիսկոպոս Տերտերյանը Բերդեհեմ չգնաց և երկար բացատրագրով Մեզ գեկուցեց, որ Բերդեհեմ չերթալու պատասխանատվությունը կ'ծանրանա Ս. Տիրան պատրիարքի վրա: Իսկ Տիրան պատրիարքին սասցվեցավ ուրիշ բացատրագիր մը, ուր ցույց կ'ուրվեր, թե Եղիշե սրբազանը ինքն է մերժած Բերդեհեմ երթալու հայրապետական հրահանգը:

Անցան ամիսներ, և Մենք, տեսնելով անփմաստ և վնասակար շարունակությունը տագնապին, պետական դատարաններու ալ առաջ, հարմար նկատեցինք Եղիշե Եպիսկոպոսը կանչել էջմիածին: Եղիշե Եպիսկո-

պոսը իր 27 հունվար 1958 թվակիր հեռագրով խոստացավ զայլ, բայց մինչև այսօր չեն երկայացավ Մայր Արքոպիսկոպոսին և ոչ իսկ նամակով մը կամ հեռագրով մը Մեզ հայտնեց իր չգալուն պատճառները:

1957 թվականի մարտ 20-ին, Երուսաղեմի Միաբանական ընդհանուր պատկանելի ժողովը Երուսաղեմի Արքոպիսկոպոսի վրա պատրիարք ընտրեց գերաշնորհ Ս. Տիրան արքեպիսկոպոսը: Մենք, ապրիլ 25-ի Մեր հայրապետական կոնգակով, շնորհավորելով հաստատեցինք Ս. Տիրան արքեպիսկոպոսի ընտրությունը Ս. Երուսաղեմի Պատրիարքական Արքոպիսկոպոսի վրա:

Այսօր ալ սակայն Երուսաղեմի Պատրիարքության կացությունը կմնա շփոթ և անմխիթար, ինչպես 1—2 տարի առաջ: Հորդանանի պետական իշխանությունը, միաբանական ներքին տագնապներու, դատական գործողություններու և արտաքին անարդար միջամտություններու նետանալով չհաստատեց Տիրան պատրիարքի ընտրությունը, և այս օգոստոսի վերջերուն ան բռնի կերպով հեռացվեցավ Երուսաղեմի իր Արքոպիսկոպոսի և Հորդանանէն:

Կիսորհինք, թե Եպիսկոպոսական սրբագումար ժողովը բնեւորան կառնե Երուսաղեմի Պատրիարքական Արքոպիսկոպոսի տագնապը, առաջնորդված անկողմնակալ և արդարամիտ ոգիներ մը, Ս. Արքոպիսկոպոսի և մեր Եկեղեցվո շահերուն գիտակցությամբ:

ԺԶ) ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կիլիկյան Արքոպիսկոպոս Երուսաղեմի Պատրիարքական Արքոպիսկոպոս այս տագնապալի և հույժ ցավալի պատկերի կողքին, մեծ մխիթարություն մը ունինք հաստատելու խաղաղ և շինարար կյանքի ընթացքը կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության, իմաստուն և բարի հովվապետության ներքին ամենապատիվ Ս. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի:

Մեզ կողմէն մանավանդ նորին Ամենապատվության ջանքերով և հոգեւոր անմիջական հսկողության տակ հաստատված

Սկյուտարի Ս. Խաչ Դպրեկանքը, ուր հայ պատանիներ կ'դաստիարակվին բրիտանական մաքուր շունչով, հայ հավատացյալ ժողովուրդին և մեր Եկեղեցիին ծառայելու սրբազան ուխտով: Մեր հարաբերությունները նորին Ամենապատվության հետ եղան ի սկզբանե անտի սիրալիր և շինարար, ի պահպանություն մեր Ս. Եկեղեցվո միության սուրբ կանոնին և ի պաշտպանություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո միակ Դուլիս բրիտանական էջմիածնի:

ԺԷ) ՄԱՅՐ ԱՐԽՈՒՍ ՏՊԱՐԱՆԸ

Առասանմանի մեջ հօգուտ Ս. էջմիածնի կազմված և աշխատող հանձնախումբերու շարքին իր արժանի և փայլուն տեղը կ'գրավեն Ամերիկայի Միացյալ Նահանգներու Արևելյան թեմի առաջնորդարանի կողքին կազմված Ս. ԷՋՄԻԱՍՏԻՆ ՏՊԱՐԱՆԻ ՀԱՆՁՆԱՆՈՒՄԲԸ, ընդ նախագահությամբ տիար Երվանդ Աղանանյանի և անդամակ-

ցությամբ աստվածասեր բազմաթիվ ազգայիններու:

Մայր Արքոպիսկոպոսի հանձնախմբի գանձապահն է տիար Զարյո Գարակոյանը: Շնորհիվ սույն հանձնախմբի եղանակուն գործունեության և հատկապես պր. Երվանդ Աղանանյանի անեղբայրացորդներ անհնուրազ և անհոգեւորեկ աշխատանքին, և ամեն-

րիկանայ հավատացյալ մեր ժողովուրդի առատաձեռնության, հաջողությամբ պսակվեցավ Ս. Էջմիածինը արդիական տպարանով մը օժտելու համար կազմակերպված ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՇԱՎՐ:

Սուրբ գործ մը իրականություն դարձավ: Մեր բոլոր նախատեսությունները գերազանցվեցան, հանգանակության արդյունքը բարձրացավ 152 000 դոլլարի:

Տպարանի մեկնեաները, հանձնաժողովի որոշման համաձայն և Մեր այ համաձայնությամբ, ապսպրված են Ամերիկա և Գերմանիա:

Ցարդ Մայր Աթոռ ստացված է ապսպրված մեկնեաներու մեկ երրորդը, մաս մը ռեպի Իսիածին հանուպարնի վրա է, իսկ մաս մըն այ տակավին պատրաստության մեջ:

Ըստ նախատեսված ծրագրի, մինչև 1959 թվականի գարունը պիտի ստացվին տպարանի բոլոր մեկնեաները և Աստուծո ռդարմությամբ շատ հավանաբար հառաչիկա տարի ամսան կսկսի գործել Մայր Աթոռի տպարանը:

Մայր Աթոռի տպարանին մեջ պիտի տպագրվին մեր պաշտոնաբերը, օրացույցը, կրոնական-եկեղեցական գրքեր և մեր միաբանության ու առհասարակ հայ հոգեվորականներու եկեղեցագիտական, կրոնաբարոյախոսական ու գիտական գրքերը:

Մայր Աթոռի նորահաստատ տպարանի փառավոր և մնայուն գործը պիտի ըլլա տպագրությունը Աստվածաշունչի աշխարհաբար բարգմանության, Աստվածաշունչի գրաբար տպագրության 300-ամյա հոբելյանի առիթով:

Թող Աստված օրհնե Ս. Էջմիածնի տպարանը, անոր հանգանակի, հանձնաժողովի անդամները և եկեղեցասեր բոլոր նվիրատուները:

ԺԸ) ՄԱՅՐ ԱԹՈՐԻ ՕԺԱՆԴԱԿ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Առասանմանի գաճազան նվիրատվություններ գոյացած գումարները ապահով պահպանելու և լավագույն օգտագործելու համար և ի շինություն Մայր Աթոռիս, Մեր առաջարկով և վավերացումով Լոնդոնի և Բեյրութի մեջ կազմված են, ազնիվ և անձնավեր ազգայիններն բաղկացած, Ս. Էջմիածնի ՕԺԱՆԴԱԿ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ:

Նյու-Յորքի, Փարիզի և Կալիֆոռնիայի առաջնորդարաններու կողմից և այլ թեմական եեղրոններու մեջ, թեմակալ առաջնորդներու նախագահության տակ, կազմված

ված են նույնպես օժանդակ հանձնաժողովներ, որոնք մեծապես օգտակար աշխատանք կտանին հօգուտ Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական կարիքներու բավարարման:

Այս առիթով Մեր և Գերագույն Հոգևոր Խորհուրդի անունով Մեր երախտագիտական խոսքը և հայրապետական օրհնությունը կուղղենք վերահիշյալ հանձնաժողովներու պատվական բոլոր անդամներուն և մեր թեմակալ սրբազան առաջնորդներուն:

ԺԹ) ՆՎԻՐԱՍՏՈՒՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԵՐ

Ինչպես նկատեցիք մեր տնտեսական կյանքին վերաբերյալ այս գեկուցումեն, Մայր Աթոռը, իր շուրջ 3 000 000 ռուբլի տարեկան բյուջեով, գրեթե ինքնաբավ տնտեսական միավոր մը դարձած է, այս կերպով հնարավորություն ունենալով արտասանմանի մեր բարեբախտներու նվիրատվությունները ամբողջովին օգտագործելու Մայր Աթոռի շինարարական մեծ ձեռնարկներու հույսով, ինչպես նաև հօգուտ Հոգևոր Ճեմարանի:

Վերջին երեք տարիներու ընթացքին կախարհի նվիրատվություններ ստացանք արտասանմանեն՝ տիար Երվանդ Հյուսիսյանեն (Միլանեն), տեհ և տիկին Սարգիս և Աստղիկ Քյուրբեյանեն (Լոնդոնեն), տիար Օհենիկ Մանուկյանեն (Գամոյեն), Ղազարոսյան Էդբայրեն (Միլանեն), տեհ և տիկին Սու-

րեն և Շաֆե Գալեմեթյանեն (Հալեպեն), ռդրագույալ Ներսես Կուլպենկյանեն (Մանչեստրեն), ռդրացյալ Մարիո Պագրեյանեն (Մանչեստրեն), պարոն Հակոբ Թոփալյանեն (Փարիզեն) և ուրիշ ազգայիններ:

Մայր Աթոռս կանոնավոր կերպով ստացած է Լոնդոնի Ագրարյան հիմնադրամի տարեկան հատկացումները:

Հոգևոր Ճեմարանը այսօր ունի 13 բարեբախտներ, որոնցմե յուրաքանչյուրը որդեգրած է սաներ մեր Հոգևոր Ճեմարանեն, յուրաքանչյուր ուսանողի համար տարեկան 500 դոլլարի վճարումով:

Այս հանդիսավոր առիթով, Մայր Աթոռիս բոլոր նվիրատուներուն կհայտենեք Մեր շնորհակալությունները և հայրապետական օրհնությունները:

Թող Տերը վարձախառնույց ըլլա անոնց բոլորին:

Ի) ԳԱՆՈՒՍՏ ԿՅՈՒՂՊԵՆԿՅԱՆ ԿՏԱԿ

Մանր է սրբագումար ժողովից Մայր Աթոռի Մեծ Բաբերա՝ ողբացյալ Գալուստ Կյուպենկյանի կտակը, վերանորոգելու և բարեկարգելու համար Ս. էջմիածինը, 350 000—400 000 դրամի նվիրատվությամբ մը:

Շուրջ երկու տարի տևող բանակցություններն հետո Մայր Աթոռի և Լիսաբոնի մեջ հաստատված Գալուստ Կյուպենկյան հիմնարկության միջև, երջանակաբիշտակ կտակարարի ուխտը սկսավ իրականություն դառնալ, շնորհիվ վերոհիշյալ հիմնարկության ղեկավարներու բարյացակամ և օրինավոր գործելակերպին:

Անցյալ տարի օգոստոս 15-ին հանույժն ունեցանք Մայր Աթոռ Ս. էջմիածնի մեջ ընդունելու Գալուստ Կյուպենկյան հիմնարկության կտակակառար մարմնի ներկայացուցիչները, հանձնես պրոֆ. սրբ. Սիդնի Քեյնի և ճարտարապետ պրոֆ. Եղվարդ Ուրունյանի, որոնք ծանոթացան տեղվույն վրա կտակի գործադրության օրինական և գործնական պայմաններուն և իրենց վերադարձին զեկուցեցին Գալուստ Կյուպենկյան հիմնարկության իրենց եզրակացությունները, տանելով միաժամանակ նաև Մեր հուշագիրը, ուղղված Գալուստ Կյուպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազեբեդո Պերդիկադին, օգոստոս 2 թվակիր:

Իբր հետևանք այս բոլորին, շատ ժամանակ չանցած, 1958 թվականի 21 մայիս թվակիր պաշտոնագրով մը Գալուստ Կյուպենկյան հիմնարկությունը, Մեր ներկայացուցած փաստաթղթերու հիման վրա, կատարեց առաջին հատկացումը՝ 80 000 դրամ, որ փոխանցվեցավ Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան քեմի առաջնորդարանին՝ Մայր Աթոռի տրամադրության ներքև:

Վերոհիշյալ 80 000 դրամի այդ հատկա-

ցումը կատարվեցավ ի հաշիվ մինչև 1957 թվականը կատարված շինարարական աշխատանքներուն:

1958 թվականի ընթացքին կատարվող և կատարվելիք աշխատանքներուն նախագծերը և նախահաշիվները ուղարկեցինք այս տարվան հուլիս ամսուն և ի պատասխան, սեպտեմբեր 4-ին Գալուստ Կյուպենկյան հիմնարկությունը կատարեց իր երկրորդ հատկացումը 50 000 դրամի գումարով մը, որով ցարդ Մայր Աթոռ Գալուստ Կյուպենկյան կտակեն ստացած է 130 000 դրամ:

Երկու կողմերու փոխադարձ հասկացողությամբ հաստատված կարգի մը համաձայն, Մայր Աթոռ տարվե-տարի պիտի ներկայացնե կատարվելիք շինարարական աշխատանքներու նախահաշիվները և Գալուստ Կյուպենկյան հիմնարկությունը, բռնելով զանոնք, պիտի կատարե համապատասխան ճանապարհով, մինչև ամբողջական կենսագործումը Գալուստ Կյուպենկյան կտակի:

Մեր խղճի պարտքը կհամարենք այստեղ, իշման Ս. Տանարին մեջ, միշտ աղոթելու վասն հոգվո հանգստյան և խաղաղության Մայր Աթոռիս մեծանուն Բաբերա ողբացյալ Գալուստ Կյուպենկյանի և իր կողակցի հիշատակին, ու նաև Մեր երախտագիտությունն ու օրհնությունը հայտնելու Գալուստ Կյուպենկյան հիմնարկության մեծարգո ղեկավարներուն, նախագահ պր. դոկտ. Ժոզե դե Ազեբեդո Պերդիկադին և Կյուպենկյան զերդաստանի հարգարժան անդամներուն՝ տիարք Նուպար և Ռոբերտ Կյուպենկյաններուն, ինչպես նաև տեղ և տիկին Գևորգ Եսայաններուն:

Երանի՜ անոնց, որ սուր հիշատակ մը ունին արձանագրված Ս. էջմիածնի հազարամյա այս փառերուն և հայ ժողովուրդի սրտին վրա:

ԻԱ) ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Համաձայն մեր Ս. Եկեղեցվո հայրերու և Մեր նախորդ հայրապետներու բխստոնեական սիրո ոգիին և լայնախոհ մտածելակերպին, Մենք ևս շարունակեցինք և հետապնդեցինք եղբայրական սիրո կապերը պահպանել և առավել ևս զարգացնել բխստոնեական բույր եկեղեցիներու հետ:

Առաջին հերթին մեծ ուրախությամբ կընշենք ավանդական բարեկամության ջերմագին ու սերտ կապերը ռուսական Պրավոսլավ Մեծ Եկեղեցիին հետ և ի մասնավորի

անոր Դահակալ Մոսկվայի և Համայն Ռուսիո Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի:

Իբրև արտահայտություններեն մեկը մեր երկու Եկեղեցիներու և ժողովուրդներու սերտ բարեկամության, Նորին Սրբությունը հատուկ պատվիրակություններով իր մասնակցությունը քերավ Մեր ընտրության և օծման հանդիսություններուն 1955 թվականի հոկտեմբեր ամսին և անցյալ տարի, Մեր Դահակալության 2-րդ տարեդարձի տոնախմբություններուն:

Այս տարի մայիսին Մենք այ պատասխանելով նորին Սրբության սիրո հրավերին, անձամբ մասնակցեցանք Մոսկվայի մեջ կայացած Ռուս Կրավորական Եկեղեցիներու Պատրիարքության վերահաստատման 40-ամյակի հանդիսություններուն:

Հոգեկան մեծ գոհունակություն պատճառեց Մեզ Մեր հանդիպումը Ալեքսի Պատրիարքին հետ, ինչպես նաև Մեր հանդիպումն ու ծանոթացումը օրթոդոքս եկեղեցիներու գրեթե բոլոր արքայականներուն հետ, որոնք այդ առթիվ հավաքված էին Մոսկվա իբրև հյուրը Ռուս Կրավորական Եկեղեցիին:

Նույնպիսի եղբայրական շնորհակալություններ և կամքներ փրկեցին մեզ Սուրբ Ստեփանոս Եկեղեցիին և անոր ալեգորիկ Հովվապետ նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոսի հետ:

Ինչպես վերև հիշեցինք, 1957 թվականի օգոստոսին, երբ այցելեցինք Թբիլիսիի մեր բնակարանը, հյուրը եղանք նորին Սրբության, միատեղ աղոթելով վրացական և հայկական եկեղեցիներու սուրբ սեղաններու առաջ: 1957 թվականի հոկտեմբերին, Համայն Վրաց շնորհագործ Հայրապետը անձամբ մասնակցեցավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ Մեր գահակալության երկրորդ տարեկան հանդիսություններուն, Վրաց եկեղեցվո ժողովուրդի և Ս. Մցխեթայի ողջույնը բերելով Ս. Էջմիածնին և հայ ժողովուրդին:

Ուրախությամբ կենցեմք նաև մեր բարեկամական կապերը Անդրկովկասի և Ադրբեջանի Մուսուլմաններու կրոնական վարչության պետ Շեյխ-ուլ-Իսլամ Հաֆիմզադե Դեբիրովի հետ, որուն ծանոթացանք 1957 թվականի սեպտեմբերին, Մեր Բաբու այցելության ժամանակ, փոխադարձ համակրանքի և հարգանքի մրեղուրտի մը մեջ:

Երջանիկ ենք հիշելու այստեղ Մեր անկեղծ սիրո կապերը Ռումանական և Բուլղարական Օրթոդոքս եկեղեցիներու և անոնց արժանավոր Գահակալներուն՝ Ռումանիո Պատրիարք նորին Ամենապատվություն Պատրիարք նորին Ամենապատվություն Կիրիլի հետ:

Դարավոր բարեկամությունը՝ Հայ, Ռուման և Բուլղար եկեղեցիներու և ժողովուրդներու միջև առավել կենդանություն կստանա մեր օրերուն, բարի արդյունքներով, ի մխիթարություն բոլորիս:

Եվ մենք ցնծությամբ ողջունեցինք Հուսիսային և Կիլիկի պատրիարքներու այցելությունը Ս. Էջմիածին, այս տարի, մայիսի վերջերուն:

Մեր գործունեության այս երեք տարիներու շրջանին մասնավոր տեղ մը գրավեցին Հայ եկեղեցվո և հատկապես Մայր Աթոռիս հարաբերությունները Անգլիկան եկեղեցվո և Ջեզուիտ դոմինիոն՝ Անգլիկան եկեղեցվո գլխավոր Քեներքերիի Արքեպիսկոպոս գերաշնորհ դոկտ. Ջեռֆֆրի Ֆիշերի հետ:

Հայտնի են ձեզ բոլորիդ վերջին ֆանի մը տասնամյակներուն հետզհետե զարգացող բարեկամական կապերը Հայ և Անգլիկան եկեղեցիներու, մանավանդ Ս. Տեղյաց մեջ՝ Նրուսադեմ:

1956 թվականին արտասահման Մեր այցելության առթիվ, Երջանիկ եղանք ընդունելու Քեներքերիի Արքեպիսկոպոսի եղբայրական սիրո հրավերը, և Ս. Սերովբե և Ս. Պապի եպիսկոպոսներուն հետ չորս օրեր, Լամբերի պալատին մեջ, հյուրը եղանք Անգլիկան եկեղեցվո մեծամուն Հովվապետին:

Այդ չորս օրերուն ընթացքին, ի պատիվ Մեզ փառավոր ընդունելություններ կազմակերպվեցան Քեներքերիի Արքեպիսկոպոսին կողմից՝ Լոնդոնի Ուեստմինստերի աբբայալանին և Քեներքերիի պատմական տաճարին մեջ, իսկ Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցիին մեջ վայելեցինք ներկայությունը նորին Դերաշնորհության, մեր սուրբ պատարագի մատուցման պահուն:

Մեր այս հանդիպումը և մեր ունեցած տեսակցությունները առավել ևս ամրապնդեցին մեր կապերը և մեր մեջ առավել ամրացավ համոզումը թե, մեր երկու եկեղեցիներու եղբայրությունն ի Քրիստոս հետզհետե ավելի և ավելի պաղատու պիտի դառնա:

Հետևանք տալով երկու կողմերու փոխադարձ փափագներուն, հարմար նկատեցինք, որ սպագային կիսապաշտոնական հանդիպումներ տեղի ունենան Հայ և Անգլիկան եկեղեցիներու ներկայացուցիչներուն միջև, նպատակ ունենալով փոխադարձ ճանաչումը և մշակումն ու բանաձևումը այն հարցերուն, որոնք հետագային կրնան բնարկման առարկա դառնալ մեր երկու եկեղեցիներու իրավասու մարմիններու կողմից:

Համաձայնեցանք էլիք Քեներքերիի Արքեպիսկոպոսին հետ, որ այդ նպատակով առաջին հանդիպումը տեղի ունենա Նրուսադեմի մեր Պատրիարքարանին մեջ՝ 1957-ի աշնան: Դժբախտաբար սակայն, Նրուսադեմի մեր վանքի ձեզ ծանոթ կացության հետևանքով, այդ բանակցությունները հետաձգվեցան անորոշ ժամանակով:

Մենք հույս ունինք, որ ապագային, ժամանակը և պարագաները բույլատու կդառնան Մեր աստվածահանո նպատակները իրագործելու համար:

Ուրախ եմ, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներում մեջ ալ նույնպիսի փոխադարձ գործակցության մրնոյարտ մը ստեղծված է Հայ և Անգլիկան եկեղեցիներում միջև: Այդ ստեղծված մրնոյարտի արտահայտությունը եղավ «Նեշընըլ Կաունսիլ ալ Չըրչս ալ

Քրայստ» կազմակերպության Ամերիկյան Եկեղեցվո աղանակցությունը:

Մենք սիրով արձանագանեցինք կանխիկ Եպիսկոպոսական ժողովուրդի մերձեցումը և գործակցության գետին մը ստեղծելու արևելքի և հատկապես մեզ դավանակից Ասորի, Հաբեշ և Հնդկ Մալբար եկեղեցիներում միջև:

Մեր իղծերեն մեկը կմնա մոտիկ ապագայի մեջ կենսագործուր Եպիսկոպոսական ժողովի այդ որոշման:

ԻՅ) ԵՊԻՍԿՈՓՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ինչպես ծանոթ է Ձերդ Սրբազնությանց Մեր աստվածահանո, անարժեքությունը և օգտակարությունը շեշտած էինք Եպիսկոպոսական ժողովի մը գումարման այստեղ, այս օրերում, Մայր Աթոռին մեջ, ներկա հանդիսություններում առիթով:

Ուրեմն վերջացնելե առաջ Մեր գեկուցումը, ձեր ուշադրության կանգնեմք ձեզ ալ ծանոթ այն պարագան, որ 1956 թվականի կանխիկ Եպիսկոպոսական ժողովի կարգ մը որոշումները ինչ-ինչ պատճառներով չիրագործվեցան, իսկ ուրիշ որոշումներ գործադրության ընթացքի մեջ կգտնվին:

Որով ստիպողական անհրաժեշտությամբ կորվի այդ խնդիրներում նորեն անդրադառնալու հարցը, ի հարկին նոր որոշումներ ընդունելու առաջադրությամբ:

Այստեղ կուզենք արանագրել հետևյալ հարցերը, առաջարկելով, որ անոնք Եպիսկոպոսական ժողովին բնության առարկան դառնան: Այդ հարցերն են՝

1) Քննարկում Ազգային-եկեղեցական Սահմանադրության նախագահի:

2) Ազգային-եկեղեցական ժողովի գումարման խնդիր:

3) Ասվածաշունչի աշխարհաբար բարգմանության և տպագրության խնդիր:

4) Կիլիկյան Աթոռի տագնապ:

5) Նուսադեմի Հայոց Կաթիարական Աթոռի կացություն և Նդիշե Եպիսկոպոս Տերտերյանի հարց:

6) Հայ և Անգլիկան եկեղեցիներու հարաբերության խնդիր:

7) Ապրիլյան եղեռնի նահատակներում հիշատակը սրբացնելու հարց:

8) Հայ եկեղեցական երաժշտության հրատարակության խնդիր:

Ինչպես նկատեցիք, Մեր առաջարկած օրակարգի մեջ կան երեք նոր հարցեր, որոնք են՝ Նուսադեմի կացությունը, ապրիլյան նահատակներու սրբացման խնդիրը և հայ եկեղեցական երաժշտության հրատարակումը:

Երե Ձերդ Սրբազնությունները ունենան ուրիշ հարցեր ևս, անշուշտ կրնան Մեզ առաջարկել:

Սրբազան եղբայրներ, սիրելի՛ պատգամավորներ:

Մեր ծննդյան հիսնամյակը և գահակալության երրորդ տարեդարձը Մենք կեկատենք հաշվետվության օր, այս երեք տարիներու Ներ գործունեության: Հաշվետու և պատասխանատու ենք Աստուծո և Մեր խղճի առաջ, հաշվետու և պատասխանատու ենք մեր եկեղեցիին ու մեր Ազգին առաջ:

Մենք, Մեր ներկա գեկուցադրով, ներկայացուցինք ձեզ, և ձեր սրբոցով մեր Ս. եկեղեցիին և համայն հայ հավատացյալ ժողովուրդին՝ ընդհանուր պատկերը անցնող երեք տարիներու Մեր աշխատանքին, պատկերը Մայր Աթոռի ներկա վիճակին, ներքին ու արտաքին մեր բեմերում, ինչպես նաև կարևոր հարցերը, որ կորվին այս պահուս մեր եկեղեցիին առաջ:

Օգտակար և անհրաժեշտ կհամարենք, որ Ձերդ Սրբազնությունները ուշադրությամբ և խղճի մտքով ձեր դատարանն ու բնաբանն առարկան դարձնեն այդ հարցերը և հետ կարծիքներու փոխանակման, ձեր եզրակացությունները հանրի բանաձևել ու ներկայացնել Մեզ:

Մեր Ս. եկեղեցին հուզող հարցերը բազմաթիվ են և ոմանք աննախընթացորեն ծանրակշիռ: Հետևաբար մեր գործունեության մեջ մեզմե ամեն մեկես կպահանջվի աշխրջություն, իմաստություն և հեռատեսություն, մանավանդ՝ մեր եկեղեցվո և ժողովուրդի գերագույն և տևական շահերու արքուն գիտակցություն, ու գործելու պայծառ. խաղաղ վեճականություն:

Մեր բոլոր դժվարությունները անցողական երևույթներ են, արդյունք անկարգ ձգտումներու, շփոթ տեսողություններու և սխալ երաժշտություններու, որոնք պահ մը տպավորությունը կորոն հիմնված բլլալու

արտասանմանի որոշ պայմաններու առարկայական կացութեան վրա: Եվ սակայն, այդ առարկայական երևացող կացութիւնները իրականութեան մեջ մեր կյանքի հետ աղերս չունեցող, միջազգային քաղաքական ժամանակավոր իրադրութիւններ են, որոնք պարզապէս կօտագործվին ու կշահագործվին ափ մը ուղեկորայններու կողմէ, որոնք Հայ Եկեղեցւոյն և հայ ժողովուրդի ներկա արժաններէն և իրական կյանքի հարցերէն հետզհետէ կհեռանան ու կօտարանան:

Մեր պարտքն է ամուր և անսասան կանգնել Հայ Եկեղեցւոյ սուրբ եանդներու և ավանդութեան պատվանդանին վրա, մնալ

հավատարիմ մեր Սրբութիւն Սրբոց Ս. Էջմիածնին, մեր ժողովուրդին և մեր Մայր Հողին: Այս իսկ է իսկապէս Մեր աշխատանքին, Մեր կյանքին և գրավականը Մեր սուրբ գործի հաղթանակին:

Թող Աստուծոյ լուսավորե Մեր համբան, բող Աստուծոյ գորացնէ բարին գործելու Մեր կամքը և մնա Մեզ օգնական և մարտակից այժմ և միշտ:

Կեցցե՛ն հայ ժողովուրդը և իր Ս. Եկեղեցին:

Հավե՛տ անսասան մնա, բարձրանա, ծաղկի ու փառավորվի մեր աշխի լույս Ս. Էջմիածինը: Ամենայն Հայոց:

